



«Սիրելիներ, եթե մեր սրտերը մեզ չեն դատապարտում,
համարձակություն ունենք Աստծո առաջ»:

Ա Յուլիանես Գ 21

ԽՈՎԱԿ

ԱՐԱՐԱՏՅԱՆ



ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՄՍԱԹԵՐԹ

2024 Թ., ՆՈՅԵՄԲԵՐ 11 (496)



Վեհափառ Տեր,

Արարատյան ճաշարապետական թեմի հավատավոր զավակների և հոգևորականաց դասի անունից շնորհավորում ենք Ձերդ Վեհափառությանը՝ գահակալության 25-ամյակի առթիվ:

Ձերդ Սրբություն, Դուք մեկ բառով դար շարունակ Ձեր հովվապետական բարձունքից ամենքիս ուսուցանում եք հավատքով ապրելու և առաջնորդվելու կերպը, ներշնչում եք կամք ու կորով, ուժականություն և տոկունություն՝ դժվարություններին դիմակայելու և մեր սուրբ հայրերի թողած ճշմարտության առաքելության ուղիներով հաստատուն քայլելու համար: «Հատ բան գոհեց մեր ժողովուրդը իր պատմության ընթացքում, բայց հավատարիմ մնաց իր հավատքին և ճշմարտությանը: Եջմիածնաձևում, որ հոգու խորհուրդը կյանքն է ու կենդանությունը, նորոգությունն ու արարումը: Եջմիածնաձևում, որ հոգով ապրեց ինքնաճանաչ, ինքնավայել, ստեղծեց ու ստեղծագործեց... ճշմարտությունը: Եջմիածնաձևում, որ հոգու խորհուրդը կյանքն է ու Աստծո Ողորմած Աջի ներքո մնալը հարազատ զավակները հայ ազգի...» (Գարեգին երկրորդ Կաթողիկոս):

Աղոթական հոգով հայցում ենք առ Աստված, որ Երկնավոր Տերը երկար և բազմադյուր տարիներ պարգևի Ձերդ Սրբությանը: Թող Տիրոջ զորակցությամբ և առաջնորդությամբ ևս առավել բեղուն մակից դարձնեն Ձեր գահակալության տարիները՝ ի փառս Աստծո, ի շահ ազգիս ճակատագրի և ի պայծառություն ճակատակցիս:

Մատչիմ ի համբույր Ձերդ Սրբության Սուրբ և Օծյալ Աջուն՝

ՆԱՎԱՍՏՐԴ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ԿՃՈՅԼՆ



«ՀԱՎԱՏԸ, ՈՐ ՍԻՐՈՎ Է ԳՈՐԾՈՒՄ...»

Գաղատացիս Ե 6




ավատքը և սերն այն զույգ ճաշարապետներն են, որոնք լուսավորում են աշխարհն ու կյանքը: Նա, ով այդ երկու գործություններն իր անձի մեջ չի միաձուլում, անհաստատ հիմքերի վրա է դնում իր կրոնական կյանքը՝ բացառելով հոգևոր մարդու զարգացման հնարավորությունը:

...Հավատքի կյանքը լայն և անհուն է: Հավատք ձեռք բերելու առաջին և գործնական պայմանը հին մարդուց մերկանալն է՝ նրան բնորոշ բոլոր գործերով հանդերձ, ինչպես նաև սրտագին զղջումով հրաժարվել հոգի անցյալից և գիտակցության մեջ խոսող բարոյական օրենքն իրագործելը: Եվ դա կատարելը մեզանից հարատև, եռանդուն ու անխոնջ պայքար է պահանջում՝ մինչև իսկ մեր եսասիրության դեմ... Որքան հաճախ են եկեղեցում ու սենյակում մտած՝ մաքուր կյանքով ապրելու խոստում տալիս, սակայն երբ փորձության ժամը հասնում է, երբ աշխարհի ծանրությունը ճնշում է քեզ, ներշնչումի պահերին ունեցած մտածումներդ և զգացումներդ անհանուն են ու հոգս ցնդում, և որքան անհիմն ու անիրական են դառնում քո սրբատենչ բաղձանքները՝ նվազածության ախորժարի և քաղցր հնչյունների նման, որոնք քիչ հետո աղոտ ծածանումների երեքամյա են թողնում մտքիդ վրա:

Քանի որ եթե հավատքին ընկերակից չի լինում գործը, ապա այդպիսի հավատքը սոսկ փափագ է՝ առանց կամքի: Այլ է կամենալը, այլ է կատարելը: Մարդիկ, առհասարակ, փափագում են բարուն: Մոլորակ չար մարդիկ էլ են ուղղամտորեն դատում, երբ նրանց մի հարց է տրվում, սակայն շատ քչերն են, որ կամքի ուժ են ձևավորում ու իրագործում իրենց բարի դիտավորությունները և մարմին տալիս իրենց բարի փափագներին: «Որովհետև ոչ թե անում են բարին, որ կամենում են, այլ գործում են չա-

րը, որը չեն կամենում» (Հռոմ. 7:19):

Հոգևոր կյանքը մի եռանդուն գործունեություն է, այնպիսի մի պատերազմ, որում պարտություն կրելը պետք է որ բացառված լինի յուրաքանչյուր խելամիտ հավատացյալի համար: Աստծուն հաճելի զոհաբերությունները երկյուղալի և խոնարհ էականություն, սուրբ ու խորտակված սրտերն են,



որոնցով Տերը բարիք պիտի գործի Սիոնին, և պիտի կառուցվեն Երուսաղեմի պարիսպները: «Խոնարհ հոգին է պատարագն Աստծուն» (Սաղմ. 50:19): Սրբության և խոնարհության մեջ է փթնում ու հասունանում այն զորությունը, որը մարդուն բարձրացնում է դեպի հրեշտակային աշխարհ:

Հավատքի աչքն անդունդում կործանվող դևերի ու երկնքում խմբված ամպերի գլխավերևում տեսնում է Փրկչին, Որը

խաղաղություն է ավետում մեր աշխարհի որդիներին, որոնք առաջնորդվում են Աստծու արդարության լույսով: Այդժամ պաշտամունքի և երկրպագության աղաղակն է դուրս բռնում մարդու հոգուց, որ թողնում է նրան գոչում է. «Տե՛ր իմ և Աստված իմ»:

Երանի՛ նրանց, ովքեր չտեսած՝ հավատում են: Հավատքն է արժանի դարձնում Աստծուն տեսնելուն: «Երանի՛ նրանց, որ սրտով մաքուր են, որովհետև նրանք Աստծուն պիտի տեսնեն» (Մատթ. 5:8): Երանի՛ նրանց, ովքեր հավատքով: Նախ՝ սրտիդ ներքին զգացումները սրբի, և ապա՝ մի անդիմադրելի զորությամբ սրտիդ խորքից երևան կգա այն, ինչը որ Քրիստոս շնորհել է սրտիդ, այսինքն՝ զուր, ողորմություն, քաղցրաբարոյություն և խոնարհություն, առաքիլություններ, որոնք, ըստ առաքյալի, նորոգված մարդու տված հասուն պտուղներն են:

Ամենից ավելի կենդանի հավատքն այն է, որը զուգորդվում է սիրով: «Հավատք, որ սիրով է գործում...»: Նոր կյանքի ողջ էությունը սիրո մեջ է ամփոփված: Սերը մեր հավատքի ոգին է իմաստն է: Փրկագործությունը մեր առջև բացահայտում է սիրո մեծագույն խորհուրդը: Սերն իրենում բովանդակում է ամբողջ տիեզերքը: «Աստված սեր է»: Այս խոսքն իշխում է դարերի, կրոնների վրա: Սերը քրիստոնեական գիտակցության այն էական զգացումն է, որը բացահայտում է քրիստոնեության հավիտենականությունը: Սերը քրիստոնեական կյանքի ներքին էությունը և հավիտենական հիմքն է: Սերը մոլորակ Աստծու կյանքն է: Աստված ինքն իրեն մեզ է պարզել, որպեսզի մենք էլ ազատորեն ինքներս մեզ ձուլենք Նրան: Մարդու հանդեպ Աստծու սերը քրիստոնեական փրկագործության սկիզբն ու կենտրոնն է, իսկ Աստծու հանդեպ մարդու փոխադարձ սերը քրիստոնեական բարոյականության հիմքն ու աղբյուրն է:

Ամբողջ Ավետարանը սիրո դուրսգալից է, որի ամենավսեմ տեսարանը տեղի է ունենում Գողգոթայի բարձունքին, ուր մարդկության մեծագույն Ձողը՝ Սեր-Փրկիչը, ինքնամղվե՛ր ծոցվում է խաչին՝ իր հաղթության գահին: Սիրո բոցերի ճաշարապետները լուսավորում են տիեզերական խավարը: Այդ արյունազարդ խաչը, այդ խողխողված Սերն է մեր հավատքի կենտրոնը: Հոգիների աշխարհը դեպի Գողգոթա է բարձրանում, իսկ խաչի տեսքը ծյան պես հալեցնում է մոլորակի ամենակարծր սրտերը: Գողգոթայի զոհասեղանին մեր հավատքն ու սերն իրար են միանում և մոլորակում են: Աստված իմ, խաչի կյանքը, խաչյալի պատկերն ինչպիսի՜ վեհ ներշնչումներով են խոսում հավատք ունեցող մարդու հետ: Հավատքի մեկ ուշադիր, լրջմիտ ու խոհուն հայացքը միայն, հոգու պարզ և զվարթ հայացքն առանց այլալայությունների իր մեջ ամբողջովին ընդունում է այդ խաչի կյանքը: Իսկ ահա սիրո կյանքը հավատքի ծաղկունքն իսկ է: Հավատքը սիրով է գործում ու ծավալվում մարդու կյանքում, ինչպես արյունը՝ մարմնի մեջ: Հավատքն ամուլ է, եթե նրան զուգահեռ չի ըմբանում սերը, որ կյանքի երջանկությունն է: Ուստի յուրաքանչյուր ոք պետք է իր անձից, իր համեմատից, իր հարստությունից մի բան զոհի, մկրաբերի իր ընկերոջը: Որքան լուսավոր պիտի լինե՛ր աշխարհն ու կյանքը, եթե յուրաքանչյուր ոք իր ունեցած բարոյական և նյութական հարստությունից բաժին հաներ իր եղբորը: Մինչդեռ երբ մեկը կյանքը համարում է որպես հաճույքի համար տրամադրված մի ծաղկեպույր, ստվերի պես թռչող ժամանակ, այդպիսի մեկը կենդանական հայացքով է նայում իրեն շնորհված կյանքին:

Ապրելու արվեստը մեր կարծածից էլ շատ ավելի լուրջ և դժվարին գործ է, հավատքի ու սիրո մի գործ: ➔ Էջ 2

«ՀԱՎԱՏԸ, ՈՐ ՄԻՐՈՎ Է ԳՈՐԾՈՒՄ...»

Էջ 7

Երկրային գործունեությունը վրդովեցնում են մեզ, խոչընդոտում են մեր հոգևոր թռիչքները դեպի բարության Արարիչը: Ուստի հարկ է, որ մենք ջանամք տկարացնել մեր անձնասիրությանը հագուստը տվող այդ ուժերը, որոնք մեր մեջ արթնացնում ու զորացնում են երկրային հանդեպ տենչանքը: Զոհողությունը գերազանցապես սիրո օրենքն է: Ուստի անհրաժեշտ է միայն, որ սիրո աստվածային տաճարում սրտերի խորաններինց սուրբ ու խնկաբույր զգացումներ վեր բարձրանան դեպի Փրկիչը: Մի՞թե այդպես չվարվեցին Մարիամները, Սանդուխտներն ու Հռիփսիմները՝ իրենց կուսական սերն արցունքներով և համբույրներով հանդերձ Հիսուսի ոտքերի առջև դնելով:

Ըստ աշխարհի «տեսակետի» տգետ ու ապիկար համարվողները Փրկչի սիրով դուրսագնացան, մարտիրոսների անմեղ ու մաքուր արյունը մարեց մարդկային ատելության բոցերը, հանուն իրենց զավակների հանդեպ սիրո ծնողները զոհաբերեցին իրենց համար ամենաթանկ գանձերը, անբուժելի հիվանդությամբ տառապողները Փրկչի սիրով կազդուրվեցին, և իրենց կյանքը վսեմ ու ազնիվ նպատակների նվիրաբերողները խավարի պահերին Տիրոջ սիրո ճառագայթներով լուսավորվեցին:

Քրիստոնեական սերը նման է վառվող մոմի, որը լույս տալու համար սպառում է


ինքն իրեն: Չկա սեր՝ առանց զոհաբերումի: Հիսուսին հետևող մարտիրոսները հաշի միջոցով բազմեցին երկնային գահերի վրա: Այդ մարտիրոսների համար Փրկչի սերն ավելի հզոր էր, քան մահը:

Իսկ ահա նրանք, ովքեր մեղքով լցված լինելու պատճառով համր, խուլ ու կույր են հավատքի մեջ և մարմնական հաճույքները, աչքին հաճելի երևույթներն ու հպարտությունը և, վերջապես, մեղքի ամբողջ արտադրանքը թունավորել է նրանց սերը, այդպիսիք մահացու վերջ ստացածի նման տառապալից ու վշտահար ցած են ընկել և Հիսուսից փրկարար գործություն չեն խնդրում:

Հավատքի աչքը սրտի վրա է, և սրտի ողջակեզն է միայն, որ ամանց է ու ընդունելի: Առանց սիրո կյանքը դատարկ է և ապերջանիկ է, մարդկային բոլոր կապերը վաղանցիկ երջանկությամբ են հյուսված, ուստի անգոր ու անստույգ են՝ տարուբերվելով կյանքի փոթորկալից ալիքների վրա, մինչդեռ անշահախնդիր սերը հավիտենական խարսխի վրա է ամրացած: Սերը բարյացակամություն և ներողամտություն է պահանջում. ինչո՞ւ ես դատում եղբորդ, եթե անկարող ես ներթափանցել նրա մտքի և սրտի բոլոր գաղտնարանները: Այն, ինչը որ քո մթագմած աչքերի համար արատ է թվում, Աստծու մաքրամաքուր լույսի առջև կարող է արդեն սպի եղած լինել, որը դժնդակ ու

հաղթական պայքարի հետևանքով է դրոշմվել քո այդ եղբոր ճակատին:

Քրիստոնեական հավատքն աստվածային շնչով, հոգեկան բարեշրջությամբ կերպարանափոխեց աշխարհը, ազնվացրեց



մարդկանց զգացումներն ու ստեղծեց վսեմ բարոյականություն, և սիրո լայնածավալ հորիզոններում հնչեցրեց բոլոր մարդկանց եղբայրության ավետիսը:

Ուրեմն մեր պարտականությունն է

կյանքն ապրել Հիսուսի ոգով: Ո՛չ աշխատանքի, ո՛չ ունեցվածքի, ո՛չ գիտության և ո՛չ էլ արվեստի մեջ պետք չէ փնտրել մեր փրկությունը. աշխարհային բարիքները միայն միջոց են Աստծու ծնած բարձրագույն կյանքը մեր մեջ կառուցելու համար: Կյանքի ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ այն գործությունն է հավատքը, որ սիրո գործունեության մեջ փթթելով՝ մեզ վերածնունդ է հավիտենական կյանքի համար:

Անապատում ով որ հավատքով նայեր պղնձե օձին, կբուժվեր. ուրեմն հավատքով նայենք Գողգոթայի խաչին, որի վրա պիտի կարդանք մեր հոգու փրկության պատգամը՝ ոսկե տառերով գրված. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի, ով Նրան հավատում է, չկորչի, այլ ընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. 3:16):

Հավատքը մարդուն աստվածային բարձունքների վրա է հասցնում, իսկ սերն Աստծուն իջեցնում է մարդկանց մեջ: Հավատքով ու սիրով ձևավորվում է մի նոր մարդկություն, որի մեջ ճառագայթում է հավատքի փառքը, և ծաղկում է սիրով պսակված երանությունը:

Մեսրոպ վրդ. ՆԱՐԻՅԱՆ
«Փոքր բարոզգիրք ժողովրդի համար», Կ. Պոլիս, 1905 թ.

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՏԻԿԵՆՅՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԵՂԱՐՁԸ



այրաքաղաքի Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու Տիկնանց միությունը տասը տարեկան է: Նոյեմբերի 3-ին միությունը հորեյանական տարեդարձը նշեց խնկո Ապոլ անվան ազգային մանկական գրադարանում: Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու խորհրդակատար Տեր Վահան քահանա Առաքելյանը միջոցառումը մեկնարկեց աղոթքով: Երեկոյի ընթացքում միության անդամները ներկայացրին տասը տարվա



աշխատանքների հաշվետվությունը:

«Տիկնանց միությունն այսօր զբաղվում է միջոցառումների կազմակերպմամբ: Իրականացնում ենք ուխտագնացություններ, այցելում խնամքի կենտրոններ, հիվանդանոցներ, զբաղվում եկեղեցու մաքրությամբ: Տարիների ընթացքում, լինելով եկեղեցու Տիկնանց միության անդամ, հոգևոր առումով զարգացանք: Միությունը նպաստում է կարևոր գիտակցության ամրապնդմանը՝ հոգևոր ծառայություն ունենալ եկեղեցուն», - նշեց միության անդամ Տաթևիկ Պետրոսյանը:

Տիկնանց միությունը տարիներ առաջ կազմավորվել է եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Գրիգոր քահանա Գրիգորյանի նախաձեռնությամբ:

«Տիկնանց միությունը նպաստում է համայնքային կյանքի ակտիվացմանը, միասնականությանը: Սկզբում դժվար էր աշխատել: Աշխատելով սովորել ենք, սովորելով՝ աշխատել, և այդպես ծնվեցին մի շարք ծրագրեր, որոնց մի մասն իրականացրել ենք, մի մասն էլ, Աստծո օրհնությամբ, կիրականացնենք: Միությունը պետք է լուծի

մի կարևոր խնդիր, անհրաժեշտ է գտնել շնորհալի և պատասխանատու մարդկանց, որոնք կփոխարինեն մեզ», - նշեց Տիկնանց միության ատենապետ Սաթենիկ Սիմոնյանը:

Միջոցառմանը միությանը ողջունեցին եկեղեցու կիրակնօրյա դպրոցի սաները, Երիտասարդաց միության անդամները: Հանդես եկան «Արև-երեխաներ»-ը:

ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՈՒԵՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

Նոյեմբերի 22-ին «Հաղթանակ» շուրջօրյա խնամքի կենտրոնի բնակիչներն այցելել են Մայր Տաճար: Նրանց ուղեկցել է կենտրոնի հոգևոր պատասխանատու Տեր Արարատ քահանա Օրդոյանը: Վերջինս ուխտավորներին պատմել է հայոց գլխավոր սրբավայրի մասին: Միասին այցելել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բանգարաններ:

Տեր Արարատի խոսքով՝ կենտրոնի բնակիչները բազմիցս ցանկություն են հայտնել՝ այցելելու Մայր Տաճար ու շատ են ոգևորվել հնարավորության համար:

«Մեր նպատակն է խնամքի կենտրոնի բնակիչների կողքին լինել, թույլ չտալ, որ մարի նրանց ապրելու եռան-



դը և չընկնեն հուսահատության գիրկը», - իր խոսքում նշեց տեր Արարատը:

Հոգևորականը հավելեց՝ առաջիկայում ծրագրում են նոր հանդիպումներ, միջոցառումներ:

ՏԵՐ ԽՈՐԵՆՆ ՕՐԻՆԵՅ ԳՊՐՈՑԻ ՆՈՐՈՎԱՍՏ ՄՐԱՅԸ

Նոյեմբերի 22-ին Արարատյան Հայրապետական թեմի Դավթաշենի Սրբոց Նահատակաց եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Խորեն քահանա Մարությանը մասնակցեց Երևանի Պեյո Յավորովի անվան համար 131 դպրոցում նորոգված դահլիճի բացմանը: Այն անվանակոչվել է Գագիկ Գինոսյանի պատվին, քանի որ հենց այս դպրոցում է վերջինս սկսել պարի դասերը ներդնել հանրակրթության մեջ:

Տեր հայրը «Տերունական աղոթք»-ով սկսեց միջոցառումը, ապա հոգեհանգստյան աղոթք կատարեց՝ հիշա-



տակելով մեր հայրենիքի նահատակներին: Դիմելով ներկաներին՝ տեր Խորենը երախտագիտություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին և ընդգծեց, որ նման ծրագրերը կարևոր են մատաղ սերունդին հայրենասիրությամբ ու ազգասիրությամբ դաստիարակելու համար:

Նա խորհրդանշական համարեց միջոցառման համար ընտրված օրը, քանի որ այն համընկել էր Արցախի ազգային հերոս Լեոնիդ Ազգալյանի ու Սարգսյան պատերազմի հայոց զորքերի հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանի ծննդյան օրերի հետ:

Դպրոցի տնօրեն Նաիրա Զաքարյանը շնորհակալություն հայտնեց հյուրերին՝ իրենց հետ այս կարևոր առիթը նշելու համար: Իր գոհունակությունը հայտնեց միջոցառման կազմակերպիչներին:

Միջոցառմանը մասնակցում էին 131 դպրոցի ուսուցչական ու աշակերտական կազմը, Գագիկ Գինոսյանի ընտանիքի անդամները, ընկերները, ազգային մշակութային գործիչներ:

Արարատյան Հայրապետական թեմի տեղեկատվական բաժին

ԴԵԿՏԵՄԲԵՐ 9

ՀՂՈՒԹՅՈՒՆ
ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

ուրբ Աստվածածնի բարեպաշտ ծնողները՝ ԱՆՆԱՆ և Հովակիմը, թեև երկար տարիներ ամուսնացած էին, սակայն զավակ չունեին, քանի որ ԱՆՆԱՆ ամուլ էր: Նրանք միշտ անդադար աղոթում ու խնդրում էին Աստծուն, որ Տերն իրենց զավակ պարգևի: Չնայած առաջացած տարիքին՝ չէին հուսալքվում և անընդհատ աղոթում էին Աստծուն՝ Նրանից ողորմություն հայցելով:

Մի օր, երբ ԱՆՆԱՆ իջնում է պարտեզ՝ աղոթելու, հանկարծ հայտնվում է Տիրոջ իրեշտակը և ավետում, որ նա զավակ է ունենալու, ում երանի են տալու բոլոր ազգերը: ԱՆՆԱՆ գոհություն է հայտնում Աստծուն, որ լսեց իր անդադրում աղոթքների ծայրն ու խղճաց իրեն: Նա խոստանում է իր զավակին Աստծուն նվիրել:

Նույն տեսիլքը երևում է նաև Հովակիմին՝ հայտնելով բարի լուրը: Սուրբ Կույսի հայրը նույնպես փառք է տալիս Բարձրալին այդ մեծ շնորհին արժանացնելու համար:

Բարեպաշտ ծնողների աղաչանքները լսելի են լինում, և ծնվում է դուստր, ում անվանում են Մարիամ, այսինքն՝ «լուսավորված»:

Մեզանից հազարամյակներ առաջ Աստված ցույց տվեց, որ անկեղծ աղոթքը, ամուր հավատն ու վստահությունը կարող են հրաշքներ գործել: Այդ հրաշքը եղավ ամուլ Հովակիմի և ԱՆՆԱՅի թախանձագին խնդրանքների պատասխանը, որ Աստված տվեց զավակի տեսքով: Հրեական մի փոքրիկ քաղաքում ծնվեց մի հրաշք, որ կարող է ծնվել յուրաքանչյուրիս տանը, յուրաքանչյուրիս սրտում:

Հավատալ, աղոթել, սպասել հրաշքի: Դեկտեմբերի 9-ը յուրաքանչյուրիս համար մեր սպասելիքների արդարացման և Աստծո պատասխանը լսելու տոնն է: Այդ օրը Հայ Առաքելական եկեղեցին նշում է սուրբ ԱՆՆԱՅԻ՝ Սուրբ Աստվածածնով իղիության տոնը, որն անշարժ տոն է:

ԴԵԿՏԵՄԲԵՐ 21

ՍՈՒՐԲ ԱՐԳԱՐ ՆԱԽԱԿԱ ԵՎ ՔՐԻՍՏՈՍԻՆ ՀԱՎԱՏԱՑՈՂ ՄԵՐ
ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Հխարհի առաջին քրիստոնյա թագավոր սուրբ Արգարը որդին էր պարթև Արշակունի Արշամի: Նա թագավորել է Օսրոյենե կոչվող երկրամասում, որի մայրաքաղաքը Եդեսիան էր (այժմ՝ Ուրֆա), ուր հավասարաչափ թվով ապրում էին հայեր և ասորիներ: Եփրատ և Տիգրիս գետերի միջև ընկած այս երկրամասը Տիգրան Մեծը կցել է Հայաստանին և իր նոր մայրաքաղաքը՝ Տիգրանակերտը, կառուցել հենց այս վայրում:

Արգար թագավորը ժամանակակիցն է եղել Հիսուս Քրիստոսի: Նրա թագավորության առաջին տարում ծնվեց թագավորների թագավորը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս:

Արգար թագավորը տառապում էր անբուժելի հիվանդությամբ՝ բորոտությամբ: Լսելով Հիսուսի սքանչելի հրաշագործությունների մասին՝ անմիջապես հավատաց, որ միայն Նա կարող է բուժել իր հիվանդությունը: Ուստի հավատի նամակ գրեց Հիսուսին, որում ասվում էր. «Արգար Արշամի որդի, աշխարհի իշխան, բարերար և փրկիչ Հիսուսիդ, որ երուսաղեմում հայտնվեցիր, ողջույն: Լսել եմ Քո մասին և այն բժշկությունների մասին, որ կատարվում են Քո ձեռքով առանց դեղերի ու արմատների: Որովհետև, ինչպես ասում են, Դու կույրերին տեսողություն ես տալիս, կաղերին քայլեցնում, բորոտներին մաքրում, չար ոգիներն ու դևերը վանում ես և առհասարակ երկարատև հիվանդություններով չարաբովորներին բժշկում ես, ասում են՝ Դու նաև մեռածներին ես կենդանացնում: Երբ այս ամենը Քո մասին լսեցի, մտքումս դրի, որ Դու Աստված կլինես, որ երկնքից իջել ես, կամ Աստծո Որդին կլինես, որ այդ անունն էս: Այդ պատճառով Քեզ գրեցի, աղաչելով, որ նեղություն կրես, գաս ինձ մոտ, բժշկես իմ ունեցած հիվանդությունը: Նաև լսեցի, թե հրեաները քեզանից դժգոհում են և ուզում են Քեզ չարաբովոր, բայց ես մի փոքր ու գեղեցիկ քաղաք ունեմ, որ երկուսիս էլ բավական է» (Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»):

Արգարի սուրհանդակն ու քարտուղարը՝ Անանիան, Երուսաղեմում գտնում է Հիսուսին և հանձնում նամակն ու մեծագին ընծաներ: Արգարն արժանանում է Փրկչի պատասխանին՝ գրված թուղթի առաքյալի ձեռքով. «Երանի՛ նրան, ով առանց տեսնելու կհավատա Ինձ, որովհետև գրված է. Ինձ տեսողները պիտի չհավատան Ինձ, բայց նրանք, որ չեն տեսել Ինձ՝ պիտի հավատան և հավիտյան պիտի ապրեն...»: Ապա նա-

մակի շարունակության մեջ Հիսուս հաստատում է, որ Ինքը չի կարող գալ, սակայն Իր համբարձումից հետո Իր աշակերտներից մեկին պիտի ուղարկի՝ նրան բժշկելու համար:

Անանիան պատասխանում նամակի հետ թագավորին է բերում նաև Փրկչի պատկերը, որը պատմության մեջ հայտնի է «անձեռակերտ դաստառակ» անունով:

Քրիստոսի համբարձումից հետո Նրա առաքյալներից մեկը՝ սուրբ Թադեոսը, եկավ Եդեսիա, բժշկեց Արգարին և քաղաքի բոլոր հիվանդներին ու ախտավորներին՝ ազատորեն քարոզելով Ավետարանը: Ողջ քաղաքը հավատաց Քրիստոսին, դարձի եկավ, հրաժարվեց կռապաշտությունից և մկրտվեց: Կուռքերի տաճարների դռները փակեցին: Առանց դժվարության հավատացյալների թիվը օրըստօրե աճում էր: Սուրբ Թադեոս առաքյալը Եդեսիայում իր քարոզչությունը ավարտելուց հետո քաղաքի եպիսկոպոս ձեռնադրեց կերպասագործ Ադդեին, ապա ուղևորվեց Հայաստան՝ քարոզելու հայոց Սանատրուկ արքային:

Սուրբ Արգար թագավորը, տոգորված Քրիստոսի սիրով, նամակներ է հղում Հռոմի Տիբերիոս կայսրին, Ասորեստանի Ներսես թագավորին, Պարսից Արտաշիր թագավորին, որպեսզի նրանք ևս ընդունեն Հիսուս Քրիստոսին՝ որպես Աստծո Որդու և Փրկչի: Նա ջանում էր ամեն տեղ քարոզել Քրիստոսի արքայությունը:

Հայ եկեղեցին սուրբ Արգար թագավորի հիշատակը տոնախմբում է դեկտեմբեր ամսին՝ Հիսուսի երկրորդ և չորրորդ կիրակիից հետո առաջին երեքշաբթի օրը:

«Աստված պարզեց մեզ թագավորներից անդրանիկին՝ բարեպաշտ Արգարին, ով հեռվից ճանաչեց երկնավոր Թագավոր Քրիստոսին, որով Նրա աստվածության քարոզը տարածվեց աշխարհի ծագերում: Նրանից հետո և Մեծն Տրդատը իսպառ հալածեց դիվանդ կռապաշտությունը Հայաստան աշխարհից և զարդարեց այն ճշմարիտ և ուղղափառ հավատով: Արդ, Աստծո հոգով լցված և բարեպաշտ սուրբ թագավոր, խնդրի Տիրոջը փրկելու մեզ անօրեն բռնավորներից, որպեսզի և մենք տոնելով թո հիշատակը՝ Քրիստոսից խնդրենք խաղաղությունը և մեծ ողորմությունը» (հատված «Ժամանուտ»-ից):

ԴԵԿՏԵՄԲԵՐ 23

ՍՈՒՐԲ ԴԱՎԻԹ ՄԱՐԳԱՐԵԻ ԵՎ ՀԱԿՈԲՈՍ ՏՅԱՌՆԵՂԲԱՅՐ
ԱՌԱՔՅԱԼԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

ննդյան տոնից առաջ, սուրբ Հովհաննես Օծնեցի հայրապետի կարգադրությամբ, Հայ Առաքելական եկեղեցին տոնում է չորս տոն, որոնք և կոչվում են «Ավագ տոներ»: Սուրբ եկեղեցու վարդապետները Սուրբ Հոգու առաջնորդությամբ Օծնդյան և Աստվածհայտնության տոնից առաջ կարգեցին ևս չորս տոն եկեղեցու յոթ գլխավոր այրերի համար:

Նախ կարգեցին Դավիթ Աստվածահոր և Հակոբոս Տյառնեղբոր հիշատակության օրը: Հայ եկեղեցին Դավիթ մարգարեի հիշատակը տոնում է Հակոբոս Տյառնեղբոր հետ, որովհետև, եթե Դավիթը Քրիստոսի «նախահայրն» է՝ ըստ մարմնի, ապա Հակոբոսը՝ նրա եղբայրը և ազգականը: Այս երկու սրբերի անունները միասին են հիշատակվում՝ խորհրդանշելու Հին և Նոր Ուխտերի միաձուլումը քրիստոնեության մեջ:

Սուրբ Դավիթ մարգարեն

Բռագի և Հռութի ծոռն էր: Աստվածաշունչ մատյանը նկարագրում է նրան որպես սաղմոս ասող, շնորհալի, պատերազմիկ, իմաստուն, ճարտասան և գեղեցիկ տեսքով մի մարդ: Նա հովիվ է եղել: Փղշտացիների հարձակման ժամանակ հաղթել է հսկա Գողիաթին: Սավուղի մահից հետո դարձել է Իսրայելի թագավորը և հիմնադրել Երուսաղեմ քաղաքը: Դավիթ մարգարեն Հին Կտակարանի ամենամեծ և ազդու դեմքերից է և միևնույն ժամանակ Սաղմոսաց գրքի հեղինակը: Աշխարհի Փրկիչ Հիսուս Քրիստոս նրա սերնդից է: Ինչպես երկրի թագավորները սովորություն ունեն իրենց խորհուրդներն ու գաճճերը հույժ հավատարիմ և վստահելի այրերին ավանդելու, այսպես և երկնային Արքան Իր տնօրինության խորհուրդը նրանց վստահեց, մանավանդ՝ Դավթին, ում համար ասաց. «Գտա Հեսեսի որդի Դավթին՝ Իմ սրտով մի մարդու» (Գործք ԺԳ 22):

Ով էլ Աստծու «սիրտ» և «կամք» կոչվեց: Դավթին էլ ասաց. «Քո խոսքերը սրտումս թաքցրի, որ

բայրը կապող օղակն է ավետարանական սրբերի և «Գործք առաքելոց»-ում հիշված սրբերի

համաձայն՝ ոմանք բռնանում են նրա վրա և պատվիրում, որ բարձրանա աշտարակի վրա և Հիսուսի դեմ չարախոսի: Սակայն, բարձրանալով՝ սկսում է խոսել Հիսուս Մեսիայի մասին, ով նստած է Աստծո աջ կողմում և, որ գալու է՝ դատելու աշխարհն արդարությանը: Շատերը հավատքի են գալիս, բայց անհավատները սրբին աշտարակից վայր են նետում: Ըստ ավանդության՝ Հակոբոս Տյառնեղբայրը թաղված է Երուսաղեմի Հայոց պատրիարքության Սրբոց Հակոբյանց Մայր Տաճարում: Նրա անունով մեզ է հասել ընդհանրական մեկ թուղթ:



չմեղանցեմ Քո դեմ» (Սաղմ. ԾԺԸ 11): Իսկ Հակոբոսին «պարիսպ» են անվանում, որովհետև Տիրոջ գաճճն անդրժեղորեն պահեց: Սուրբ Հակոբոս Տյառնեղ-

միջև: Նա Երուսաղեմի առաջին եպիսկոպոսն է: Հովսեփիոս հրեա պատմիչը նրան բնորոշում է «արդար» մակդիրով: Վարքագրական աղբյուրների



ԴՐԱՆՏԻ ԸՆՏԱՆԻՔ

ԱՐՏՅՈՒՄ ՈՒ ԱՐՓԻՆ...

«Շողակն Արարատյան» ամսաթերթի սիրելի ընթերցողներ, «Դրախտի ընտանիք» խորագրով մեր շաբթի այս գրույցն իր ձևաչափով փոքր-ինչ տարբեր է նախորդներից: Որպես այս տարվա ներկայացվող վերջին ընտանիք՝ ձեզ կներկայանան ամուսինն՝ մասնագիտությամբ ավտոմոբիլային ինժեներ-մեխանիկ, ներկայումս ՀՀ ուժային կառույցի աշխատակից, ՀՀ Զինված ուժերի պահեստազորի փոխգնդապետ Արտյոմ Ղուշչյանը և ես՝ «Շողակն Արարատյան» ամսաթերթի թղթակից, բանասեր Արփի Խաչատրյան:

Խորհրդավոր մի զուգահեռությամբ մեր տասներեքամյա ընտանիքի հիմքը դրվել է շնորհիվ «Շողակն Արարատյան» ամսաթերթի: Առաջին անգամ Արտյոմին հանդիպել եմ 2008-ի փետրվարին, երբ «Հայ երիտասարդն ու իր հոգևոր մտահոգությունները» խորագրով շաբթի շրջանակներում հարցազրույց էի վարում առաջնորդանիստ Սբ. Սարգիս Եկեղեցու «Արարատ» երիտասարդաց միության անդամների հետ, որոնց մեջ էր նաև Արտյոմը: Հանդիպման թեման էր՝ «Ընտանիք և ընտանեկան խնդիրներ»-ը: Հենց այդ զրույցի ընթացքում երիտասարդ զինվորական Արտյոմ Ղուշչյանն իմ ուշադրությունը պիտի հրավիրեր Մկրտիչ Խրիմյանի «Դրախտի ընտանիք» գործին: Այդ ժամանակ ո՞վ կմտածեր, որ երեք տարի անց ընտանիք կկազմենք, որտեղ այսօր մեծանում են մեր երեք որդիները:

Արտյոմի խոսքով՝ դեռ մանկուց երազել է իր հայրական ընտանիքի պես հայեցի, ամուսնի ընտանիք ունենալու մասին. «Իմ փոքրիկ դրախտի ընտանիքը կառուցելիս պատկերացումներս ավելի հստակ դարձան: Եվ դրանում մեծ է Խրիմյան Հայրիկի «Դրախտի ընտանիք» աշխատության ազդեցությունը»: Իսկ ես, սնվելով ծնողների ստեղծած խաղաղ ու ստեղծագործ «այգու» պտուղներից, երազում էի ունենալ այնպիսի ընտանիք, որտեղ սերը կհոսեր ու տարեցտարի կհասունանար այնպես սա-

հուն ու ներդաշնակ, ինչպես Համո պապիս ու Ռոզա տատիս տասնամյակների ընթացքում չծերացող սերն է եղել»:

Այն հարցին՝ ինչ հատկանիշներ գրավեցին մեզ միմյանց մեջ և տարիների հետ ինչ որակներ բացահայտեցինք, Արտյոմը պատասխանում է. «Հենց սկզբից ինձ գրավեց խոսուն աչքերով, կիրք վարքով, զուսպ խոսքով այդ աղջնակը, ում հետ 2011-ի ամառային մի լուսավոր օր կնքեցինք հավատարմության մեր ուխտը՝ կառուցելու դրախտի մեր ընտանիքը: Տարիների ընթացքում հրաշալի կնոջ և մոր որակներին զուգընթաց ինձ հաջողվեց Արփիի մեջ բացահայտել կյանքի ընկերոջը, լավագույն և անդալաճան ընկերոջը»: Ինձ Արտյոմը գրավել է իր գրագետ խոսքով, հետաքրքիր ու բանիմաց գրուցակից լինելով և զինվորականի խիստ կեցվածքի տակ շատ խորը թաքցրած նուրբ ու զգայուն հոգով: Արդեն հետագայում գնահատեցի նրա կիրք վերաբերմունքն ազատության իմ ունեցած սահմաններին, որ երբեք չցանկապատվեցին, և շոշափելի հարգանքը կյանքի հանդեպ ունեցած իմ «գույներին», որոնք երբեք չխամրեցին երազկոտ աղջնակից կին ու մայր դառնալու կարևորագույն առաքելության ճանապարհին: Ես կարևորում եմ նաև Արտյոմի՝ որպես ընտանիքի գլուխ, ամեն պահ ինքնակատարելագործվելու մղումը, անսահման համբերատարությունն ու իմաստուն լռությունը:

Ընտանիքի ներսում երկուսս էլ տարիների ընթացքում գնացել ենք տարբեր զիջումների, բայց գտել ենք մերը, անամենակամը: «Մերն» անհամեմատ բարձր է սեփական «ես»-ից: Եվ հենց այդ ընթացքում էլ սովորել ու սովորեցրել ենք միմյանց: Արտյոմը խոստովանում է. «Հաշվի առնելով զինվորական անցյալս՝ կարող է տարօրինակ թվալ, բայց Արփիի օգնությամբ է, որ մեր ծանոթության հենց սկզբում նորովի եմ բացահայտել եռաբլուրն ու Դուշման Վարդանին: Նրանից եմ սովորել ավելի լայն նա-

յել աշխարհին ու մարդկանց: Արփիափայլ գույները եկան գունավորելու շատ դեպքերում սևով և սպիտակով սահմանափակված կյանքի ընկալման գունապանակս»: Փոքր-ինչ հուզված վերոնշյալ խոսքերից՝ զուցե չկարողանամ թվարկել այն ամենը, ինչ սովորել եմ ամուսնուցս, բայց կնշեմ առանցքայինը: Արտյոմի հետ ապրելով՝



շոշափելիորեն տեսնում եմ՝ Տերն ինչպես է գործում հասարակ մահկանացուի միջոցով: Ես նրանից սովորում եմ իրապես սիրել ու վստահել Աստծուն, և անել դա ամեն օր ու ամենադժվար թվացող իրադրության մեջ անգամ բաց չթողնել Բարձրալի Ամենագոր Չեռքը:

Տարիներ շարունակ Արտյոմն աշխատել է ծանրաբեռնված գրաֆիկով, ինչը

որոշակի դժվարություններ է ստեղծել, բայց մեր ընտանիքում գործող հետևյալ «կանոնի» շնորհիվ, այն է՝ բոլոր հարաբերությունները կարգավորել միմյանց հանդեպ հարգանքի և անկեղծության մթնոլորտում՝ հիմնված սիրո չինացող օրենքի վրա, հասել ենք գոհացնող արդյունքի: «Մի ժամանակ ողջ ծանրությամբ զգացել եմ աշխատանքի և ընտանիքի համատեղման դժվարությունները, որովհետև զինվորական ծառայությունն ինձ համար ավելին էր, քան պարզապես աշխատանքը: Արդյունքում քիչ ժամանակ էր մնում երկու տղաներիս դաստիարակության, կնոջս ու ծնողներիս հանդեպ հոգատարության և ուշադրության համար: Հանգամանքների բերումով անցնելով քաղաքացիական ծառայության այլ ուժային կառույցներում՝ համեմատաբար թեթև ռեժիմի պայմաններում ինձ հաջողվեց ավելի շատ ժամանակ հատկացնել ընտանիքիս: 44-օրյա պատերազմի արհավիրքից հետո ծնվեց երրորդ որդիս՝ Արեգը՝ հուլիսի 5-ը, այսինքն ավելի մեզ համատարած անորոշության մթնոլորտում»,- պատմում է Արտյոմը:

Չավակների դաստիարակության հարցում երկուսս էլ կարևորում ենք սեփական օրինակը, ահեղի մի պատասխանատվություն, որ ժառանգել ենք մեր ծնողներից: Մենք երեխաներին և՛ լուռ սովորեցնում ենք և՛ լուռ սովորում նրանցից: Սովորում ենք նրանց պես վստահող հոգի ունենալ և անմիջական վերաբերմունք կյանքի ու մարդկանց հանդեպ, սովորում ենք լավ ընկեր լինել ու մտերիմ հոգի: Մենք ամուսիններով գոհանում ենք մեր փոքրիկ ձեռքբերումներով, ինչը նաև սովորեցնում ենք մեր երեխաներին: Բայց նրանց դաստիարակության հարցում ամենաառաջնայինը մնում է հայ քրիստոնյայի կերտման ամենօրյա անձանձուրյա աշխատանքը: Մենք փորձում ենք մաքուր ապրել այս սրբացած հողի վրա մեր խղճի ու Աստծո առաջ՝ նույնը պատգամելով մեր զավակներին:

→ էջ 8

ՍՈՒՐԲ ՀՈՎՋԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ԱՐԹՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(հատված Պողոս առաքյալի հռոմեացիներին ուղղված թղթի մեկնությունից)

«Այս էլ իմացեք, որովհետև հիմա ճիշտ ժամն է, որ մենք քնից զարթենք» (Հռոմ. 13:11): Պողոս առաքյալը սրանով հորդորում է բարի գործեր կատարել: Դատաստանի օրը դռան մոտ է, ասում է, ինչի մասին նաև կորնթացիներին գրեց, թե. «Այսուհետև ժամանակը կարճ է» (Ա Կորնթ. 7:29), երբայցիներին էլ, թե. «Շատ փոքր ժամանակ է, և գալու է նա, ով պիտի գա և չպիտի ուշանա» (Եբր. 10:37): Սակայն այնտեղ աշխատածներին և ճգնաժամներին էր հաստատում, որ փորձությունների մեջ էին, և այսպես էր ասում, որպեսզի մխիթարեր նրանց, իսկ այստեղ քնածներին արթնության կոչ է անում, քանզի յուրաքանչյուրին էլ այս խոսքերը պետք են: Արդ, ի՞նչ է նշանակում, թե՛ ժամն է մեզ քնից արթնանալու: Այսինքն մոտ է հարությունը, դռան մոտ է հասել ահեղ դատաստանը, մերձեցել է այն ահավոր օրը՝ հնոցի պես բորբոքված, և այսուհետև մենք պետք է ազատվենք ծուլությունից:

«Քանի որ փրկությունն այժմ մեզ ավելի մոտ է, քան երբ որ մենք հավատացինք» (Հռոմ.

13:11): Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է ցույց տալիս նրանց հարության հավաստի լինելը, թեպետ և ժամանակներից առաջ ասաց, քանզի որքան մեր անցավոր ժամանակներն անցնում են, այդքան մոտենում է հանդերձյալ հավիտենականությունը: Եվ թե՛ պատրաստ գտնվես, և ինչ հրամայված է քեզ, այդ ամենն անես, ապա այդ օրը քեզ համար փրկության օր կլինի, իսկ եթե դրան հակառակ անես, ապա չի կարող այդ օրը փրկության օր լինել: Եվ ոչ թե տրտմեցնում է նրանց, այլ ասում է որպես սփոփանք գալիք վշտերի, նաև, որպեսզի ծուլության չտրվեն, այլ հակառակը՝ աճեն: Քանզի որքան թագավորը մոտ է, այդքան առավել ևս պետք է պատրաստ գտնվենք, և մանավանդ, որքան հաղթության մրցանակը մոտ է, այդքան պետք է պատրաստ գտնվենք մրցումներին: Ուստի դրա համար էլ նա ասում էր, թե. «Փրկությունն այժմ մեզ ավելի մոտ է, քան երբ որ մենք հավատացինք»:

«Գիշերն անցավ, և ցերեկը մոտեցավ» (Հռոմ. 13:12): Ապա ուրեմն, այս վերջանում է, և այն

սկսվում, ուստի ըստ այդմ՝ կենցաղավարեք, և ոչ թե հակառակը: Մերկանանք ամեն տեսակի տեսիլքներից, զերծ մնանք կենցաղային երազից, մի կողմ թողնենք խորքում և առաքինության հանդերձներ հագնենք, քանզի սա է ցույց տալիս՝ ասելով. «Դեմ գցենք խավարի գործերը և հագնենք լույսի գրահը» (Հռոմ. 13:12), որովհետև կանչում է մեզ օրը ճակատամարտի և պատերազմի: Արդ, ինչպես կարող ենք չպատերազմել, պետք է պատերազմենք, սակայն առանց տառապանքի: Այն իրական պատերազմի պես չէ, այլ վայր է ցնծության, որովհետև այդպիսին է զեմքի էությունը, այդպիսին է գորավարի էությունը:

Եվ երբ ասաց, թե ցերեկը մոտեցավ, և չասաց, թե հասավ, այլ դեռ սկիզբն է, ասում է. «Շարժվենք առաքինությամբ, ինչպես ցերեկով, ոչ անառակությամբ» (Հռոմ. 13:13): Ոչ թե խմելն է արգելում, այլ՝ անսահման խմելը, և ոչ թե գինի վայելելը, այլ այն ամենը, ինչ զինու անհագությունից է առաջանում: Ինչպես որ ասում է՝ «ոչ պոռնկությամբ», սրանով ոչ

թե ամուսնությունն է արգելում, այլ՝ անառակությունը: Ասում է՝ «ոչ պոռնությամբ և ոչ էլ՝ նախանձով», քանզի սրանք բորբոքում են աղտեղությունները, որովհետև ոչ մի բան այնքան ցանկություն չի բորբոքում և բարկություն առաջացնում, որքան արբեցողությունն ու զինու անհագությունը: Դրա համար էլ նախ ասում է՝ «ոչ անառակությամբ և հարբեցողությամբ», ապա ավելացնում է պոռնությունն ու նախանձը՝ մերկացնելով չարության զգեստներին:

Այնուհետև մեզ զարդարում է՝ ասելով. «Զգեստավորվեք Տեր Հիսուս Քրիստոսով»: Եվ չասաց, թե գործերով, այլ այդպես ասելով առավել քաջալերում է նրանց: ...Որովհետև Տերն Ինքն է մեզ զգեստ տալիս, նույն Ինքն՝ Թագավորը: Քանզի ով Նրանով է զգեստավորվում, պետք է ունենա Նրա բոլոր առաքինությունները: Եվ զգեստավորվեք ասելով՝ մեզ պատվիրում է ամբողջովին Նրանով ծածկվել, ինչպես որ այլ տեղում է ասում. «Քրիստոս ձեր մեջ է» (Կորնթ. 1:27), նորից. «Քրիստոս բնակվի ձեր մեջ» (Եփես.

3:16): Քանզի Նա ցանկանում է բնակվել մեր հոգիներում և այն որպես պատմունք մեզ հագցնել, որպեսզի թե՛ մեր ներքինը և թե՛ արտաքինը Նա լինի, քանզի մեր կատարումն էլ Նա է, որովհետև Նրա կատարումը լցնում է ամեն ինչ:

Ուրեմն, զարթնիր քնից, զգեստավորվիր Նրանով, քանզի ով Քրիստոսով է զգեստավորվել, աշխարհային ամեն ինչ մի կողմ դնելով միայն մի բան կփնտրի, որպեսզի մարմինն առողջ պահի և միայն դրա համար խնամք կտանի և մնացյալը կնվիրի հոգևոր խնամքին: Այդպես կարող է զարթնել քնից, այդպես կարող է չծանրանալ զանազան ցանկություններով: Հետևաբար, այս կյանքը երազի պես է, և պետք է թողալիք այդ քունը, որպեսզի կարողանանք հանդերձյալ բարիքներին ժառանգակից լինել շնորհով և մարդասիրությամբ մեր Տեր Հիսուսի Քրիստոսի, Նրա հետ նաև Հորը և Սուրբ Հոգուն փառք հավիտյանս. ամեն:

Փոխակերպումը գրաբարից՝
Գայանե ԹԵՐԶՅԱՆԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ, ՄՏԱՎՈՐԱԿԱՆԸ, ՀԱՅՐԻԿԸ

«Թումանյանը երեխայի աչքն ու ականջը գեղեցիկին հաղորդակից դարձնելը համարում էր նրա կայացման կարևոր բանալին»։ Ամենայն հայոց բանաստեղծի մասին պատմում է գրականագետ Անի Եղիազարյանը։ Նրա հետ մեր զրույցը Թումանյանի՝ հայրիկի, ընտանիքի հոր կերպարի թումանյանական մոդելի մասին է։ Բանաստեղծն ուներ տասը երեխա՝ չորս որդի և վեց դուստր։ Նրանք մեծացել են գրականությամբ ու արվեստով լի միջավայրում ու դարձել հայրենիքի նվիրյալ արվեստագետներ ու գործիչներ։

Հայկական ընտանիքի թումանյանական մոդելը

Թումանյանը բացառիկ կապվածություն է ունեցել իր ընտանիքի յուրաքանչյուր անդամի հետ՝ անկախ հանրային դիրքից, հոգսաշատ առօրյայից և ամիսներով հարկադրված տանից բացակայելու հանգամանքից։ Թումանյանի համար, կարծում են, ընտանիքում կարևոր դերում կիմն է՝ ընտանիքի մայրը՝ կիրթ, խոհուն, համբերատար և գնահատված։ Թումանյանի՝ որպես ընտանիքի հոր մասին վկայագրերը, բարեբախտաբար, լիովին առկա են։ Դրանք հիմնականում կազմում են զավակների և հոր նամակագրությունը, տիկնոջ՝ Օլգայի հետ ունեցած նամակները, ժամանակակիցների հուշագրությունները, որոնք գրեթե չեն կարողացել շրջանցել այն բացառիկ սիրո նկարագրությունները, որ տածել է Թումանյանին իր ընտանիքի հանդեպ։ Ընտանեկան հարաբերություններում՝ կարևորագույնը ներդաշնակությունն է և փոխադարձ ընկալումը։ Թումանյանը երեխայի աչքն ու ականջը մանկությունից գեղեցիկին հաղորդակից դարձնելը համարում էր նրա կայացման կարևոր բանալին։

Ամենայն հայոց բանաստեղծը, մտավորականը, լավ հայրը...

Երեխաների մանկության տարիներին Թումանյանն առավել կարևորում էր նրանց առողջ ապրելակերպը՝ առաջնորդվելով «Առողջ մարմնում առողջ հոգի» ասույթով, որն անգամ գրի էր առել ու փակցրել ճաշասենյակի պատերից մե-



Անի Եղիազարյան

կին։ Նրա ջերմությունն առավել զգալի էր դառնում և զուսպ արտահայտվում այն դեպքերում, երբ զավակները ցանկություն էին հայտնում օտար երկրներ մեկնել՝ կրթություն ստանալու։ Թումանյանն իր տունը համարում էր համալսարան՝ լի հարուստ ու բազմաբովանդակ գրադարանով և ժամանակի կիրթ ու բանիմաց մարդկանց իմաստուն խոսքերով։ Պատահական չէ, որ ի տարբերություն իր ժամանակի շատ ընտանիքների՝ Թու-

մանյանը միշտ հորդորում էր երեխաներին ներկա լինել իր տանը կազմակերպվող գրական երկույթներին, ազգային խնդիրների քննարկմանը, մշակութային բանավեճերին, ունենալ հիշատակարաններ, որտեղ նրանք պիտի գրի առնեին իրենց ամառային արձակուրդների ընթացքում արածը, կարդացածն ու բնությունից, միջավայրից ստացած տպավորությունները։ Իհարկե, երբեմն դրանք կարդալիս հունորով ասել է, թե գրածներն առավել մոռացարաններ են, քան հիշատակարաններ։ Անգամ կյանքի վերջին օրերին, երբ ցավոք գտնվում էր ընտանիքից հեռու՝ Մոսկվայի հիվանդանոցներից մեկում, նրա միակ փափագն էր. «Տուն գնանք, երեխաներիս տեսնեմ... Էնքան եմ կարոտում ձեզ, ձեզ, որ կողքիս եք, նրանց հետ միասին, որ հեռվում եմ. բոլորին կարոտել եմ...»։

Թումանյանի ու իր ընտանիքի կապը՝ նամակներում

Պահպանվել են Թումանյանի զավակների տարբեր բնույթի նամակները, անգամ այնպիսիք, որ կարելի է գուշակել, թե երեխան մոր-նոր է տառաճանաչ դարձել, բայց արդեն հորը կամ եղբորը նամակ է գրել։ Նամակագրությունը, որն այսօր գրեթե վերացել է, հղկում է ոչ միայն մարդու գրավոր խոսքը, միտքն ու ձեռքը, այլև այն բացառիկ տարածքն է, որտեղ մարդը, թերևս, ամենից անկեղծն է։ Այդ նամակները հնարավորություն են տալիս բացելու ընտանեկան մուրբ հարաբերությունների ողջ ներկայանալը։ Այնտեղ կարելի է տեսնել քույրերի ու եղբայրների, հոր, մոր և զավակների միջև եղած կապը՝ նամակում միմյանց դիմելու ձևերից մինչև հրաժեշտի շեշտադրումներն ու փաղաքշական անվանումները։ Նամակագրական կապը

նաև փոխադարձ պատասխանատվության զգացում էր առաջացնում ընտանիքի անդամների մեջ, հեռավորությունը երբեք խոչընդոտ չէր կարող դառնալ՝ միմյանց մասին լուր ունենալու և ըստ անհրաժեշտության գործելու։ Նամակ գրելու հարցում Թումանյանը չափազանց խստապահանք է եղել հատկապես բանտարկության տարիներին։ Ընտանիքից հեռու՝ գոնե նամակների միջոցով կարողանում էր տեղեկանալ նրանց մասին՝ փոխանցելու խորհուրդներ կամ անհրաժեշտ տեղեկություններ։

Թումանյանի կրթող, դաստիարակող ստեղծագործությունները

Երեխայի դաստիարակությունը, թերևս, ամենից բարդ բանն է։ Թումանյանը կարծես թե գտել էր դրա հիմնական բանալիները։ Նախ սեփական կեցութաձևով օրինակ ծառայել, ապա ստեղծել համապատասխան միջավայր, որտեղ երեխան կարող է կրթվել անուղղակիորեն, ոչ երբեք պարտադրանքով։ Ազատ ու լայն մտածողության ձևավորում՝ մուրբ ճաշակի վրա հիմնված, թերևս սա էր Թումանյանի դաստիարակության առաջնությունը կետերից մեկը։ Ստեղծագործություններում առավել կիսանդիպենք ոչ ուղիղ դաստիարակչական մոդելների։ Դրանք աշխարհաճանաչողության, մարդկային հարաբերությունների կառուցման, բնության հետ հարաբերվելու, ինքդ քեզ հետ ներդաշնակվելու և ինքնաճանաչման հնարավորություններ են։ Հողվածներում երբեմն կարելի է հանդիպել ուղիղ ձևակերպումների, որն առավելապես վերաբերում է երեխայի կրթությանը, զարգացմանը և ի վերջո՝ պիտանի և լավ մարդ դառնալուն։

Պատրաստեց ԱՆՆԱ ԱՎԱԳՅԱՆԸ

ՍՈՒՐԲ ՀԱԿՈՒԲ ՄԾԲՆԵՑԻ

ուրբ Հակոբ Մծբնեցի հայրապետը, որին մականվանել են «Զգոն», «Իմաստուն» և «Մեծ», պարթևական ազգից էր՝ սուրբ Գրիգոր Լուսավորչի հորաքրոջ՝ Խոսրովուհու որդին։

Անակ Պարթևի ողջ ընտանիքի բնաջնջման ժամանակ փրկվեց նաև Հակոբը։ Նրան էլ, ինչպես մանուկ Գրիգորին, դայակները փախցրին Կեսարիա, որտեղ նա դաստիարակվեց քրիստոնեական ոգով։ Ավելի ուշ քույրը նրան տարավ Պարսկաստան։ Սակայն Հակոբը, որ նախընտրում էր ճգնավորական կյանքը, հեռացավ Ասորեստան և առանձնացավ Մծբին քաղաքից ոչ հեռու։

Նա բնակվում էր անտառներում ու բարձրաբերձ լեռներում՝ սնվելով միայն վայրի ծառերի պտուղներով ու բանջարեղենով, իսկ հագուստը պատրաստված էր այծի կոշտ մազից։ Հարատև աղոթքների և ճգնությունների միջոցով հասնելով մեծ սրբության՝ Հակոբը մարգարեության շնորհի ստացավ Տիրոջից։

Երբ նա լեռներից իջավ մարդկանց մոտ, տեղեկացավ, որ Մծբինի շրջակայքի բնակիչները թեև դարձի են եկել, սակայն ծաղրով են վերաբերվում համաշխարհային ջրհեղեղին և Նոյյան տապանի պատմությանը։

Այդժամ սուրբը ճանապարհ ընկավ

դեպի Արարատ լեռը։ Նա կանգնում էր գտնել տապանից մի կտոր և բերել իր ժողովրդին՝ նրա անհավատությունը փարատելու նպատակով։ Բայց լեռան գագաթին չհասած՝ հրաշք կատարվեց. երբ սուրբ Հակոբը քնած էր, տապանից խաչաձև մի բեկոր հայտնվեց նրա գլխի տակ։ Նա վերցրեց այն և վերադառնալուց հետո այդ բեկորով բազում հրաշքներ գործեց։

Եպիսկոպոս ձեռնադրվելով՝ սուրբ Հակոբ Մծբնեցին իր քարոզչությամբ դարձի բերեց շատերին, հիմնեց դպրոցներ ու եկեղեցիներ, ինչպես նաև կազմակերպեց պարսից Շապուհ արքայի կողմից պաշարված Մծբին քաղաքի 70-օրյա պաշտպանությունը։

Երբ սուրբն ավանդեց իր հոգին, նրա մարմնից անուշահոտություն էր բուրում, և նրա վրա լույս էր ճառագում։ Հետագայում նրա գերեզմանի վրա կառուցվեց եկեղեցի։

Ավանդադրույց

Սուրբ Հակոբը գիշեր-ցերեկ Աստծու փեշերը ընկած՝ աղոթում է, որ Նա օգնական լինի իրեն Մասիս լեռը բարձրանալու համար։ Քանի-քանի անգամ բարձրանում, հասնում է Մասիսի կեսը, քունը տանում է։ Հրեշտակները գալիս են, մտնում թևերը,



Սուրբ Հակոբ Մծբնեցի

իջեցնում, բերում են սարի տակը։ Շատ որ Աստծուն աղաչում-պաղատում է, Աստված ասում է Գաբրիել հրեշտակին. «Գնա Նոյի տապանի տախտակից մի կտոր բեր, տուր սուրբ Հակոբին»։ Գաբրիելը կատարում է Աստծու պատվերը, և սուրբ Հակոբը հրաժարվում է Մասիս բարձրանալուց։

Ասում են, թե սուրբ Հակոբը ժամանակին բարձրացել է Ռշտունյաց գավառի Ընծաքիսար կամ Կապուտկող լեռան գագաթը և այնտեղից գլուխը բաց՝ անեծք է կարդացել ամբողջ գավառին, որովհետև Մանաճիր անունով Ռշտունի մեծ իշխանը, հակառակ նրա թախանձանքներին, ծովն էր նետել տվել ծերունի հայրապետի անմեղ սարկավազներին։ Սրբի անեծքը կատարվում է, և Ռշտունյաց գավառում երեք տարի շարունակ անձրև չի գալիս։

Պատրաստեց ԱՆՆԱ ՊՈՂՈՅԱՆԸ




ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ ՉԵՆ ԱՅՐՎՈՒՄ. ՀԱՅ ԱՐԵՎԵԼԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԹՈՒՐԲԱԿԱՆ ԺԵՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ

...Օսմանյան կայսրությունը Հայոց ցեղասպանությունը իրագործեց հայ ժողովրդի պատմական բնօրրանում, որը դարձավ նախնադարյան 20-րդ դարի ընթացքում մարդկության հանդեպ իրագործված ոճրագործությունների, որոնց արձագանքներն այսօր լսելի են աշխարհի տարբեր տարածաշրջաններում: Ներկայիս թուրքիան Օսմանյան կայսրության իրավահաջորդն է, որը տասնամյակներ շարունակ իր արխիվները, Հայոց ցեղասպանության մասին վավերագրերը ոչնչացնելուց հետո լծված է պատմական իրողությունը ժխտելու քաղաքականությանը... Սակայն վավերագրերը չեն այրվում, և Հայոց ցեղասպանության մասին վկայությունները «չեն լուր» մոլորակի ցանկացած անկյունում բազմաթիվ երկրների արխիվներում, որոնք դեռ շարունակելու են համալրել արժեքավոր աշխատությունների շարքը, և դրանք դառնալու իրավաքաղաքական կռիվներ են արդեն անժամանցելի իրավունքի՝ Հատուցմանը հասնելու համար: Այդ հանգրվաններից մեկը մեր գիտնականների համար եղել է Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվը, որտեղ պահվող պատմական վավերագրերը ի մի են բերվել «Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան» Երուսաղեմի Հայոց Պատրիարքարան» (հատոր Ա, Երևան, 2024, «Լուսակն» իրատ. 1040 էջ)՝ կոթողային աշխատության մեջ աշխատասիրությամբ Լուսինե Սահակյանի, Անի Ոսկանյանի, Անի Սարգսյանի:

Երկարատև ջանքեր են պահանջվել համահեղինակներից, որպեսզի առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվեն Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում 1938 թ. ի պահ տրված «Հայկական հարց»-ի այս գերկարևոր նշանակություն ունեցող արխիվի մանրամասն ցուցակը և վավերագրերի բովանդակության ծավալուն նկարագրությունները: Նշենք, որ այս ախիվն ուսումնասիրվել է մասնակի կերպով և շատ վավերագրեր լուսաբանման կարող են մնացել: Եվ սա

դեռ միայն առաջին հատորն է: Գիտնականների գնահատմամբ դեռ մեր հատորներ են լույս տեսնելու գրեթե մոյն ծավալով:

Նշենք, որ սույն ուսումնասիրությունն իրականացվել է ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում՝ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի հետ համագործակցությամբ: Գրքում առաջին անգամ ցուցակագրվել և ման-



րամասն նկարագրվել են 1938 թ. Երուսաղեմի Հայոց պատրիարքարանում պահվող 1919-1922 թթ. 4. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի հովանու ներքո ստեղծված «Տեղեկատու դիվանի»՝ «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության» 11 տուփից բաղկացած անմշակ այս արխիվի առաջին տուփի վավերագրերը համապատասխան ծանոթագրություններով: Այն ընդգրկում է 635 վավերագրի (2038 էջ) նկարագրությունը (հայերեն, օսմաներեն, ֆրանսերեն, անգ-

լերեն, գերմաներեն, ռուսերեն): Տասնմեկ տուփերում պահվող բազմահազար էջանոց բացառիկ այս արխիվն ունի աղբյուրագիտական եզակի արժեք: Այն մանրամասներ է հաղորդում 1912-1922 թթ. Հայկական հարցի զարգացման հանգրվանների և Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար: Արխիվում են հավաքված հայ և օտար քաղաքական, հասարակական, հոգևոր գործիչների, դիվանագետների բազմաթիվ զեկուլյցներ, տեղեկագրեր, նամակներ, ակամատեսների վկայություններ և օրագրեր, ինչպես նաև Առաջին աշխարհամարտից առաջ և հետո Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրերի հայ բնակչության, որբերի, բռնի իսլամացված ու առևանգված հայերի, նյութական կորուստների վիճակագրական ցանկեր, առաջնորդարաններից 4. Պոլսի պատրիարքարան ուղարկված նամակներ, Օսմանյան իշխանությունների հայերի բնաջնջման հրամանագրեր, երիտթուրք ոճրագործների անվանացանկեր, քեմալականների իրականացրած ոճրագործությունները վկայող վավերագրեր և այլն:

«Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան» Երուսաղեմի Հայոց Պատրիարքարան» սովորածավալ հատորը համալրել է հայագիտական հետազոտությունների այլևս պատմական արժեք դարձած կոթողային աշխատությունների շարքը: Եվ այս գիրքն արդեն իսկ մեծ քննություն է բռնել վկան մինչ օրս տեղի ունեցած բազմաթիվ շնորհանդեսներն են Հայաստանում և Աֆրիկայում: Զափազանց արժեքավոր է գրքում տեղ գտած Լուսինե Սահակյանի հեղինակած 120 էջից բաղկացած առաջաբանը: Այն իրականում գիրք է՝ գրքի մեջ, որում արխիվի վավերագրերի հիման վրա լուսաբանված են պատմաքաղաքական այն իրողությունները, որոնց հորձանուտում վճռվում էր հայ ժողովրդի ճակատագիրը:

Պատմությունը չի լուր... Եվ ինչպես

իրավացիորեն առաջաբանում գրում է Լուսինե Սահակյանը՝ «Տեղեկատու դիվանի» այս եզակի արխիվը ստեղծվել է որպես հայոց օսմանյան Ռազմական մատյաններում և Ազգերի լիգայի դատարաններում Հայոց ցեղասպանության կազմակերպիչ պատասխանատուներին ու մասնակից հանցագործներին օրինական պատժելու և արդարությունը վերականգնելու համար: Այս ճանապարհին աշխարհասփյուռ հայ ժողովուրդը քայլելու է Հայ Առաքելական եկեղեցու հետ. ազգային արժեք, որ պատմության երթում միշտ եղավ մեր գոյության սյուներից մեկը: Եվ դեռ մինչև Հայաստանի անկախացումը Հայոց եկեղեցու հայրերը իրենց բաժին պայքարն են բերել Հայոց ցեղասպանության ճանաչման համար պայքարում:

Ազգ-եկեղեցի կապը ժամանակի հոլովույթում ավելի է ամրանալու, քանզի Հայոց եկեղեցու շնորհիվ սրբադասվեցին Հայոց ցեղասպանության նահատակները: Եվ մեր սրբադասված նահատակների բարեխոսությամբ շարունակվելու է մեր անվախճան պայքարը:

...1916 թվականին գերմանացի գիտնական Ժոզեֆ Մարկվարթը, վկայելով հայ ժողովրդի հանդեպ իրականացվող ցեղասպանությունն ու հայրենագրկումը, գրում էր. «Նույնիսկ Սահմանադրության հռչակումից հետո, թուրքական քաղաքականության հիմնական լուրսնգն է եղել՝ առանց հայերի չի լինի Հայկական հարց»... Հայկական հարցը կա և լինելու է, որովհետև կա իր պատմությանն իրավատեր հայ ժողովուրդը... Եվ «Հայկական Հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան» Երուսաղեմի Հայոց Պատրիարքարան» աշխատությունը մեր գիտնականների ծանրակշիռ պատասխանն է թուրքական ժխտողականությանը և սա մի մեծարժեք վավերագիր հայագիտության անդամատանում...

Շնորհակալություն այս աշխատությունը ստեղծող նվիրյալներին...

Հասմիկ ՊՈՐՈՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԻ ԱՆԿՅՈՒՆ

ԱՂՈՐԹՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ թիվ 10-ում

Այսօր գիտությունն օգտագործում է նորագույն համակարգչային տեխնոլոգիաները բացահայտելու աղոթքի ֆենոմենը, և ռուս գիտնականներն առաջին քայլերն են արել այս ոլորտում: 1986 թ. մեյի 30-ին Մոսկվայի Մ. Սելգինի առաջին անգամ գրանցեց աղոթող իր քաղաքականության ուղեղի էնցեֆալոգրամա: Սենսացիոն արդյունքները խանդավառությամբ ընդունվեցին համաշխարհային հոգեբուժական գազաթափողովում, իսկ հոդիդիդային Միությունում Սելգինի գրեթե հեռացրին ինստիտուտից: Նա կարողացավ ցույց տալ, որ աղոթքի ժամանակ իրականում անհետանում է ուղեղի ակտիվությունը, այսինքն՝ տասնապատիկ նվազում: ...Փորձնականորեն հաստատվել է, որ աղոթական վիճակն օգնում է արյան բարձր ճնշում ունեցողներին և դիաբետիկներին. մի քանի րոպեում արյան մեջ խոլեստերինի մակարդակը նվազում է և նյութափոխանակության գործընթացները նորմալանում են: Աղոթելը հատկապես օգտակար է նրանց համար, ովքեր երբեմն ընկնում են խորը դեպրեսիայի մեջ և տառապում մանիակալ-դեպրեսիվ փոփոխությամբ: Ընդհանրապես, որքան ծանր է հիվանդությունը, այնքան մարդն ավելի հաճախ է դիմում Աստծուն օգնության համար: Օրինակ՝ Փասադենայի աստվածաբանական ճեմարանի և Կալիֆորնիայի համալսարանի գիտնականները հարցազրույց են անցկացրել շիզոֆրենիա-

յով, դեպրեսիայի ծանր ձևերով և որոշ այլ հոգեկան հիվանդություններով տառապող ավելի քան 400 հիվանդների հետ: Նրանք պարզել են, որ հարցվածների 80 տոկոսը դիմել է աղոթքի օգնությանը՝ հաղթահարելու հոսանքները, ազդեցիկության նույնությունը կամ քրոնիկ լավանությունը: Քենթրիջի համալսարանի գիտնականները փորձել են ուսումնասիրել այս երևույթը ինչպես են աղոթքը և Աստծո հանդեպ հավատը թեթևացնում մարդու տառապանքը: Ուղեղի հետազոտման կենտրոնում հետազոտողները հավաքեցին քսան խորապես հավատացյալ մարդկանց և նույնքան աթեիստների: Փորձի մասնակիցներից յուրաքանչյուրի ափի արտաքին մասում ամրացված են եղել էլեկտրոդներ, որոնց միջով էլեկտրական հոսանքի փոքր արտանետումներ են ուղարկվել: Հետազոտության ժամանակ հավատացյալներին խնդրեցին նայել Հիսուս Քրիստոսի պատկերակին, իսկ աթեիստներին՝ Գոգենի «Ջրաղաց» նկարին: Նրանք, ովքեր նայում էին Քրիստոսի դեմքին, իրենց լիովին ապահով էին զգում և չէին անհանգստանում, քանի որ վստահ էին, որ Տերը հոգ կտանի իրենց մասին: Միևնույն ժամանակ, սենսորները ցույց են տվել, որ նրանք 15%-ով ավելի քիչ ցավ են զգում, քան նրանք, ովքեր տեսել են Գոգենի նկարը: Ուղեղի սկաները ցույց են տվել, որ հավատացյալների ուղե-

ղի աջ ճակատային հատվածը լուսավորվել է ցույց տալով ցավը մոդուլացնող նյարդային ակտիվացումը: Բայց աթեիստները ուղեղի նման ռեակցիա չունեին: Այսպիսով, գիտնականներն արձանագրել են, որ աղոթքի ժամանակ հավատացյալների սրտեսի մակարդակը նվազում է, արյան ճնշումը նորմալանում է, իսկ սրտի ցավն անհետանում է: Արդյունքն այն է, որ նրանք ավելի քիչ են հիվանդանում, ավելի երկար են ապրում: Այլ փաստեր կարող են վկայել աղոթքի իրաշարժող ազդեցության մասին: Քննության ավարտին բոլոր նրանք, ովքեր աղոթել են, նշել են, որ պահպանում են զգայական ընկալման նորմալ մակարդակ և ուշադրության և հիշողության որևէ խանգարում չեն ունեցել, այսինքն՝ լիովին պահպանել են գիտակցությունը:

Ժամանակակից հոգեբանական մշակույթի ներքին և անհատական վերաբերմունքի շեշտադրումը բխում է քրիստոնեական ժառանգությունից: Հայտնի հոգեբան Ֆ. Է. Կասիլյուկը ձեռնարկում է հոգևոր արակտիկայի վերլուծությունը հոգեբուժության տարածքում՝ ընդգրկելով հոգեբանությունը և հոգեթերապիան: Նա աղոթքը ինտեգրում է մի շարք հիմնարար կատեգորիաների, որոնք ընդլայնում են մարդկային կյանքի ողջ էքզիստենցիալ հորիզոնը: Հեղինակը մատնանշում է աղոթքի հոգեբանական աղբյուրը՝ ճգնաժամին

դիմանալու անկարողությունը: Աղոթքը հոգեբանական նշանակություն ունի, հուսահատության խորությունը կամ, ընդհակառակը, անսահման ուրախությունը բացահայտում է հոգևոր աղբյուրներ, և աղոթքը գալիս է ոչ թե դրսից՝ ոչ թե որպես սովորած, արհեստական գործողություն, այլ ներսից՝ որպես հոգևոր օրգանիզմի ինքնաբերական զարգացում, նույնքան բնական, որքան շնչառությունն է: Ֆ. Է. Կասիլյուկը նշում է, որ աղոթքը տանում է ոչ այնքան հոգեկան «թեթևացման», որքան հոգևոր ազատագրման և փոփոխության ոգեշնչման: Ըստ իր վերջնարդյունքի՝ դա անհատականության արմատական վերափոխման փորձ է, խոստովանության և մետամոյայի զուսմարը, մտքի և կյանքի փոփոխությունը սիներգիստական ազատության համատեքստում, այսինքն, մարդու ազատությունը՝ չափազանց ընդլայնված օգտակար էներգիաներով:

Այնուամենայնիվ, աղոթքի ազդեցությունը մինչ օրս էլ մնում է որպես «խորհուրդ», վերգիտական ֆենոմեն: Աղոթքը բնական և գերբնական բացարձակ եզակի համատեղում է, այսինքն՝ մարդու համդիպումը կամ կապի նորոգումն Աստծո հետ:

Արմինե ՎԱՅՆՅԱՆ
հոգեբան

ՄԻ ԵՐԳԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔԻ ՈՒ ՄԵՂԵՂՈՒ ՇՔԵՂ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

2018 թվականին լույս էր տեսել բանաստեղծությունների «Ես գիտեմ» ու ընդհանուր առմամբ Պատրաստվում էի գրքի շնորհանդեսին: Այդ օրը խոսք պիտի ասեին անվանի երկու գրականագետներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալի-տա Պոլիսյանյանը և իմ լավ բարեկամ, հիանալի գրականագետ ու մշակույթի գործիչ, ավադ, արդեն հանգուցյալ Սերժ Սրապիոնյանը: Գրականագետներից զատ պիտի խոսեին նաև երաժշտագետներ ու երաժիշտներ՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Ալինա Փախլանյանը և նույն բուհի պրոֆեսոր, դաշնակահարուհի ու անվանի երգահան Մարգարիտ Սարգսյանը, որոնց վաղուց էի ճանաչում:

Բոլորն էլ ստացել էին գիրք: Անցան օրեր: Ձանգահարեց Մարգարիտ Սարգսյանը: Առաջարկեց հանդիպել կոնսերվատորիայում: Երբ հետաքրքրվեցի ո՞րն է հանդիպման առիթը, ասաց.

«Անակնկալ է, կգաք, կիմանաք, սպասում ենք:

Երբ ասաց սպասում ենք, հասկացա, որ միայն նա չէր սպասում ինձ: Գնացի կոնսերվատորիա: Դաշնամուրի առջև Մարգարիտն էր, նրա կողքին՝ բարեկամ ու հմայիչ երիտասարդներ էին: Հասկացա, որ երգիչներ են: Մարգարիտը ներկայացրեց նրանց՝ տաղանդավոր Աննա Պողոսյանին, ջազային երգչուհի Լուսինե Կոզյանին և բարիտոն Անդրանիկ Մախաթյանին: Դաշնամուրին դրված էր բանաստեղծություններն «Ես գիտեմ» ու ընդհանուր առմամբ Հասկացել էի, որ իմ խոսքերով երգ պիտի հնչի: Վստահ էի՝ դա էր անակնկալը: Չէի սխալվել: Ես անհամբեր սպասում էի՝ զգալու խոսքի ու մեղեդու դաշնության հմայքը:

Մարգարիտի վարպետ մատները ակնթարթորեն սահեցին ստեղծերով: «Աղոթք առ Հայաստան» բանաստեղծության հրաշալի մեղեդի էր ծնվել: Ես զգում էի, թե ինչպես է խոսքի ու մեղեդու դաշնությունից ծնունդ առած երգը թևածում հպարտ ու անկուտում: Մեր ապագայի հույսերի ու հաղթանակների երգն է դա, որում հառնում է տառապյալ ու արնածոր, բայց հիմնավոր ու շքեղ Հայաստան երկիրը: Ես հուզված լսում էի երգիչների կատարումը: Աչքերս թացվել էին: Երբ մարեցին երգի վերջին հնչյունները, մոտեցա Մարգարիտին ու երգիչներին: Գրկախառնվեցինք: Հուզմունքս փոխանցվեց նաև նրանց:

«Մեզ հասկանալի է ձեր հուզմունքը,» ասացին երգիչները: «Երբ Մարգարիտը մեզ տվեց բանաստեղծությունը, մենք ևս հուզվեցինք: Դա, իրոք, աղոթք է առ Հայաստան,

աղոթք առ Աստված: Բանաստեղծության տողերը շատ են համահունչ մեղեդուն: Մենք անսահման սիրով ենք պատրաստել այդ երգը, ամեն փորձի ժամանակ խորհել մեր հրաշալի հայրենիքի ապագան լուսավոր տեսնելու մասին: Ամեն փորձի ժամանակ անբացատրելի մի զգացողություն է թրթռացել մեր հոգում:

Երբ հույզերը հանդարտվեցին, Մարգարիտը հարցրեց.

«Հավանեցի՞ք երգը:

«Քիչ է ասել, թե հավանեցի,» չքաքցելով հիացմունքս՝ ասացի ես, «սա մեր հույսերի իրականացման ու հավատի հզոր մի աղոթք է, Մարգարիտ: Հուզմունքս անսահման է:



«Ես շատ բանաստեղծների խոսքերով եմ երգեր գրել,» ասում է Մարգարիտը: «Հաճախ դժվարությամբ են երգեր ծնվում, առավելագույն ջանք է պահանջվում լավ երգ գրելու համար, բայց ձեր բանաստեղծությունն ինձ այնքան է հուզել ու գերել, որ մեղեդին ծնունդ առավ ակնթարթորեն: Մտադիր եմ տեսահոլովակ պատրաստել և այն ներկայացնել մեր համայնքում, որովհետև այսօր նման երգերով պիտի հույսի ու լավատեսության շող պարզենք ժողովրդին և հասնենք մեր չիրականացած երազանքներին, կառուցենք մեր երազած Հայաստանը: Հզոր են ձեր բանաստեղծության պատկերները, որոնք շաղախված են ամսար լույսով, հառնելու ու վերածնվելու անսահման հավատով: Ձեր բանաստեղծությունը միջնադարյան որմնակար է իհիշեցնում, ուր պատկերված են մեր սրբալույս նշխարները՝ հորովելն ու շարականները, հայրենի հողը, հացը, կովից

տուն դարձող հերոս այրերն ու ճաքած ձեռքերով խմոր շաղախող գթասիրտ մայրերը...

Աղոթք եմ անում հայրենի հողը հերկողի համար, Սուրբ շարականներ, անմահ հորովել երգողի համար, Աղոթք եմ անում ես սերմնացանի, հնձվորի համար, Եվ հայոց հողը թշնամուց փրկող զինվորի համար:

Աղոթք եմ անում կովից տուն դարձող այրերի համար, ճաքած ձեռքերով խմոր շաղախող մայրերի համար, Աղոթք եմ անում թոնրից նոր հանած տաք հացի համար, Օջախը լցնող մանկական ճիչի ու լացի համար:

Երգի կատարումից մի տեսակ շփոթված, մի տեսակ հուզախառն՝ տուն էի վերադառնում, բայց իմ տեսապատկերից չէին հեռանում երգիչները, ունկերումս դեռ թրթռում էր նրանց հրաշալի կատարումը: Այդ երգը մի նոր շող սփռեց իմ ստեղծագործական ճանապարհին, հույսով ու հավատով լցրեց Հայաստան երկրի այսօրվա համար փոքրկված հոգին:

Անցան տարիներ: Մի օր կրկին զանգահարեց Մարգարիտ Սարգսյանը:

«Լավ լուր ունեմ հայտնելու,» տեղեկացրեց նա, «Արթուր Հակոբյանի հրաշալի գործիքավորմամբ տեսահոլովակն արդեն պատրաստ է: «Համացանցում շատ մեծ արձագանք է գտել մեր երգը, որի տեսահոլովակը նախապես ուղարկել էի նաև Լոնդոնում 2023-ին անցկացված «Golden Time Talent» արվեստների համաշխարհային հայտնի փառատոնին: Ինձ համար հաճելի անակնկալ էր, երբ տեղեկացա, որ «Աղոթք առ Հայաստան» երգը գրավել է առաջին հորիզոնականը: Անբացատրելի զգացողություն ապրեցի: Անսահման երջանիկ էի:

Մարգարիտի խոսքերից հուզմունքս կրկնապատկվեց: Որոշեցի կրկին գնալ կոնսերվատորիա, հանդիպել նրան: Հանդիպեցինք, երկար զրուցեցինք: Ինչ լավ է, որ մեր ստեղծագործական վեցնյակի անափ սիրուց ծնունդ առավ շքնաղ մի երգ: Աստծու կամոք էր այդ երգի ծնունդը, երգ, որը հառնեց ու ճախրեց Հայոց երկնքում, նաև՝ աշխարհի տարբեր լայնություններում՝ ջերմությամբ լցնելով Սփյուռքում ապրող մեր հայրենակիցների սրտերը: Երգ, որը, որպես ամսար մի կանթեղ, լուսավորելու է մեր վաղվա օրը:

Բաբկեն ՄԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅ ՄԵԾԵՐԻՆ ԽՆԿԱՐԿԵՆՔ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՂՈԹՔՈՎ

Լեք Թագվորի Մանուկյան... չկա այնպիսի չափման միավոր, որով հնարավոր լինեի գնահատել մեծանուն հայի երջանկահիշատակ Ալեք Մանուկյանի ձեռնարկած հայրենանվեր, եկեղեցաշեն գործերը:

Բարեբախտաբար Հայաստանի ազգային արխիվում, Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվում են ազնվաբարո բարերար, ճարտարագետ, արդյունաբերող, Հայ բարեգործական ընդհանուր միության նախագահ, Հայաստանի ազգային հերոս Ալեք Մանուկյանի գրած ու ստացած նամակները (Ամենայն Հայոց կաթողիկոսներ, նշանավոր հայ մտավորականներ, քաղաքական ու հասարակական գործիչներ):

Ծանոթանալով վավերագրերի բովանդակությանը՝ պատկերացում ես կազմում ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի անցուդարձերին, այլև այն ահռելի ազգանվեր գործերին, որոնց վրա դրոշմված է Ալեք Մանուկյանի անունը: Ազնվագարն հայրը զուներներ է հատկացրել հայկական եկեղեցիներին, դպրոցներին, մշակութային միություններին, մարզական ու երիտասարդական կազմակերպություններին, ծերանոցներին, գրադարաններին, օժանդակել շատ համալսարաններում հայագիտական ամբիոնների հիմնադրմանը և հայկական ծրագրերի իրականացմանը:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը բարձր գնահատելով ազնվագուր հայի ծառայությունը հայոց եկեղեցուն, նրան շնորհել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բարձրագույն Գրիգոր Լուսավորիչ շքանշանով:

Նրա աճյունը ամփոփված է Մայր Աթոռի բակում, նրա միջոցներով հիմնած «Ալեք և

Մարի Մանուկյան» թանգարանի հարևանությամբ: Հիշատակն արդարոց, օրհնությամբ եղիցի:

Ստորև ներկայացնում ենք Ալեք Մանուկյանի երկու նամակը:

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ
ՍՍՅՄ ԴԵՄՊՈՆ ԱՆԱՏՈՒՆ ԴՈՔՐԻՆԻՆ
ա/թ
ՆՈՐԻՆ ԳԵՐԱՋԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՏՈՒՆ ԴՈՔՐԻՆԻՆ
ՍՍՅՄ ԴԵՄՊՈՆ ՎԱՇԻՆԳՏՈՆՈՒՄ

Նորին գերազանցություն,
Անդրադառնալով հուլիսի 31-ի իմ նամակին, ցանկանում եմ ձեզ հայտնել, որ Հայկական ցուցահանդեսի ծրագրի իրագործման ժամանակը փոքրամասն է արդեն: Ինչպես ինձ տեղեկացնում են, մեծ թանգարանում ցուցահանդես կազմակերպելու համար հարկավոր է սպասել առնվազն 5 տարի նորմալ պայմաններում: Դիտորոշի արվեստի ինստիտուտի հետ իմ ունեցած լավ հարաբերության շնորհիվ նրանց կողմից դրական պատասխան ստացա այդ նպատակի համար, և նախնական թվական որոշվեց 1975թ. հունվարի սկզբները:

Քանի որ Ձեր դեսպանության և Հայկական ՍՍՀ Միմիստրների սովետի նախագահ պրն. Գրիգոր Արզումանյանի կողմից որևէ պատասխան չստացվեց, հարմար գտա սույն նամակով հարցը հետապնդել ցուցահանդեսը ծախսողության մատնելու համար:

Գիտեմ, և փաստ է, մեր երկրում արվեստի հայտնի ինստիտուտներ մեծ հետաքրքրություն են ցուցաբերում նման ցուցահանդեսի մասին: Նկատի ունենալով, որ ժամա-

նակը բավականին երկար է նման ծրագրի իրականացման համար: Այլ անհատներ և հայկական կազմակերպություններ նույնպես իրենց ցանկությունն են հայտնել տարբեր քաղաքներում ցուցահանդեսը կազմակերպելու կարող էք նրանց առաձնիք վերաբերմունք ցույց տալ:

Նկատի ունենալով ժամանակն ու ծախսերը, մեծ ցանկություն է ցուցահանդեսը կազմակերպել Դիտորոշի արվեստի ինստիտուտում հունվար ամսին: Ցանկանում ենք նաև փոխադրական, ապահովագրականը և կազմակերպչական հարցերը քննարկել ձեր դեսպանության պատասխանատու մի անձի հետ:

Առ ի գիտություն Ձեզ հայտնեմ, որ այսօր պրն. Վ. Համազասպյանից հեռագիր եմ ստացել ցուցահանդեսի մասին պետական դեպարտամենտի թույլտվության հարցի շուրջ: Մեր գրասենյակը ամսիցս պետական մեջ մտավ պետական դեպարտամենտի հետ և տեղեկացավ, որ ամերիկյան կողմից որևէ արգելք չկա ցուցահանդեսը կազմակերպել Դիտորոշում: Ամեն պարագայի տակ շատ շուտով գրավոր է ստացվելու այդ մասին և 1 օրինակը ուղարկելու է Ձեզ:

Կարճագույն ժամանակում Ձեր դրական պատասխանը մեծապես գնահատվելու է:

Անկեղծորեն՝ Ալեքս Մանուկյան
Նախագահ
Պատճեններ – Վիկտոր Սակովիչ
Ամատուլի Սկրտչյան
Վարդգես Համազասպյան

Հայաստանի ազգային արխիվ

ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՐԻԳՈՐ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ

31 Յուլիս 1974թ.
Նյու Յորք

Ն.Վ. ԳՐԻԳՈՐ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Երևան, Հայկական ՍՍՀ

Մեծայարգ Վարչապետ,
Երբ երեք տարիներ առաջ բախտաւորութիւնը ունեցանք այցելելու Մայր Հայրենիք և տեսակցելու նախկին Վարչապետ Տիգրան Քաղալ Սուրաբեյանի հետ, բաղձանք յայտնած էինք որ պատմական առարկաներով ցուցահանդեսներ կազմակերպուին Միացեալ Նահանգներու մէջ: Մեր զրոյցին ներկայ գտնուած էր նաև Հայաստանի Մշակոյթի այժմու նախարար Տիգրան Արամյան Սարգիսեան:

Վերջերս հաճոյքն ունեցանք հեռաձայնային կապ հաստատելու Տիգրան Սարգսեանի հետ, որ տեղեկացուց թէ պատմական առարկաներու ցուցահանդես մը արդէն տեղի կունենայ ներկայիս Ուաշինկթըն նահանգի Սփոքեյն քաղաքին մէջ, սովետական ցուցահանդեսի տաղաւարին կողքին:

Տիգրան Սարգիսեան մեզի յիշեցուց մեր յայտնած բաղձանքը այդ ուղղութեամբ եւ յայտնեց, թէ Հայկական ցուցահանդեսը այլ քաղաքներու մէջ ներկայացնելու համար հարկ է դիմել անձամբ Ձեզի՝ Ձեր արտօնութիւնը ապահովելու համար:

→Էջ 8


ԵՐԵՎԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

19-րդ դարում, ցարական Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո, Արևելյան Հայաստանում բացվում են պետական և հոգևոր դպրոցներ: 1836 թ. մարտի 11-ի եկեղեցական կանոնադրության սահմանած կարգի համաձայն, 1837 թ. սեպտեմբերի 2-ին Երևանում բացվում է հոգևոր թեմական դպրոց: Վերոհիշյալ կանոնադրությունը («Положение») սահմանում էր Հայ Առաքելական եկեղեցու իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև փոխհարաբերությունները ռուսական կառավարության հետ: Այն էպպես կրճատում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավունքները՝ նրան վերապահելով հիմնականում կրթական հարցեր: Կանոնադրության համաձայն՝ էջմիածնում բացվում է ճեմարան, Սինոդ, Ռուսաստանի հայկական և հայաբնակ շրջանները բաժանվում են 6 եկեղեցական թեմերի (Թիֆլիս, Երևան, Շուշի, Շամախի, Նոր Նախիջևան, Աստրախան), որոնցում բացվում էին կոնսիստորիաներ և մեկական թեմական դպրոցներ, իսկ եկեղեցիներին ու վանքերին կից՝ ծխական դպրոցներ: Երևանում, որպես վեց թեմերից մեկում, կոնսիստորիայի բացումից հետո, թեմի փոխանորդ արքեպիսկոպոս Ստեփանոս Արղությանի նախաձեռնությամբ բացվում է վերոհիշյալ հոգևոր դպրոցը, որը տարբեր ժամանակներում և պաշտոնական գրություններում կոչվել է նաև սեմինարիա, ճեմարան, ուսումնարան, իսկ 1876 թ. սկսած, հայրապետական կոնդակներում՝ դպրանոց: Թեմական դպրոցների հիմնական խնդիրը հոգևորականների որդիներից տվյալ թեմի եկեղեցիների համար հոգևորականներ, մասամբ նաև ծխական դպրոցների ուսուցիչներ պատրաստելն էր: Դպրոցը բացելու հրամանը տրվում է օգոստոսին: Ուսուցիչները ընտրվել էին կոնսիստորիայի կողմից: Դասերը սկսվում են սեպտեմբերի 2-ից: Դպրոցի շենքը գտնվում էր Չորագյուղում, Սուրբ Սարգիս եկեղեցու հարավ-արևմտյան կողմում, այդ պատճառով երևանցիներն այն անվանել են «Չորագյուղի դպրոց»: Բաղկացած էր 2 սենյակից և 1 նախասենյակից: Հայոց հոգևոր թեմական դպրոցի հիմնադրական ցանկում աշխատության շնորհիվ առատ տեղեկություններ են պահպանվել ինչպես դպրոցի գործունեության, այնպես էլ շենքերի մասին: Դասերը տևել են 1,5-2 ժամ, կես ժամ ընդմիջումից հետո սկսվել է հաջորդ դասը:

Թեմական դպրոցի առաջին ուսուցիչներն առանձնապես չեն փայլել իրենց գիտելիքներով: Եթե այդ ժամանակ դժվար էր լավ պատրաստված ուսուցիչ գտնել, էլ ավելի դժվար էր դպրոցը ղեկավարելու

ընդունակ անձնավորություն՝ տեսուչ գտնել: Դպրոցի առաջին համալսարանավարտ տեսուչը Գրիգոր վարդապետ Աղամիրյանն էր: Այս ամենի հետ միասին դպրոցում կատարվում էին նաև որոշակի առաջադիմական քայլեր: Դպրոցական կանոնադրությունից տեղեկանում ենք, որ աշակերտները բաժանվում էին խմբերի՝ ըստ իրենց գիտելիքների չափի, կամ ուսուցիչը պարտավոր էր հաշվի առնել սովորողների ինչպես տարիքը, այնպես էլ՝ մտավոր զարգացման, ըմբռնման աստիճանը: Նույն կանոնադրությունը ուսուցման գործընթացում կիրառելի էր համարում նաև կոշտ միջոցները, ինչպիսիք էին սոված թողնելը, դասասենյակում արգելափակելը, տեսուչի թույլտվությամբ նաև՝ մարմնական պատիժները:

Աշակերտության և ուսուցչության խնդիրները, ինչպես նաև նյութական անապահովությունը (ըստ ժամանակակիցների տեղեկությունների) ի վերջո դպրոցի փակման պատճառ են դառնում: Նշված պատճառներին ավելանում է նաև այն հանգամանքը, որ Երևանի կոնսիստորիան տեղափոխվում է Էջմիածին, և դպրոցը մնում է առանց հսկողության: 1848-1849 ուս. տարում վերատեսուչ Թովմաս Թևումյանը անձնական խնդիրների պատճառով հրաժարական է տալիս, որին հետևում է դպրոցի փակման որոշումը: Հիսնամյակից տեղեկանում ենք, որ որոշումը կայացվում է Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու հատուկ կոնդակով, որտեղ կաթողիկոսը, դժգոհելով դպրոցի ուսման որա-



«Չորագյուղ», 1929 թ. թուղթ, փայտափորագրություն
Հակոբ Կոջոյան

Առաջին տարիներին աշակերտների թիվը շատ փոքր էր: Հիսնամյակից տեղեկանում ենք, որ Սինոդի թիվ 1115 հրամանով թուլատրվում է դպրոց ընդունել նաև աշխարհականների որդիներին՝ «...ճեմարանի աշակերտաց պակասը լրացնելու ընդունակ որդովք աշխարհականաց», որոնք կարող էին նաև հոգևորականներ չլրանալ: Այս քայլը մի կողմից աշակերտների մեծ հոսք է բերում դպրոց, որը ստիպված են լինում կանգնեցնել շենքային պայմանների պատճառով, մյուս կողմից առաջացնում է քաղաքում ավելի վաղ բացված գավառական դպրոցի տեսուչների դժգոհությունը, որտեղ սովորում էին աշխարհականների տղաները: Աշակերտների պակասը պայմանավորված էր նաև նրանով, որ իրենք՝ հոգևորականները, նույնպես խուսափում էին իրենց գավառներից հոգևոր դպրոց ուղարկել:

կից, գրում էր. «Սեմինարիա անունն նշանակե սերմնացան՝ ուր հարկ է լինիլ ամենայն հոգևոր գիտություն սերմանիք... ահա ավելի քան 10 տարի ոչինչ սերմնարանական գտանի արդիւնք ուսմանց, այլ ի գուր ծախս բավական թեպետ և անարժան անուանն սեմինարանի»:

Դպրոցի անմխիթար վիճակից էլնելով կաթողիկոսն ավելի նպատակահարմար էր համարում փակել այն և փոխարենը քաղաքի եկեղեցիներին կից բացել ծխական դպրոցներ:

(Հարունակելի)

Պատրաստեց
Սուսաննա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ
Երևանի պատմության
թանգարանի
«Նոր պատմություն»
բաժնի ղեկավար

ԱՐՏՅՈՒՄ ՈՒ ԱՐՓԻՆ...

Էջ 4 ←

Ընտանիքների հաջողության գաղտնիքներին և անհաջողության պատճառներին անդրադառնալիս Արտյոմը նկատում է. «Հայ ընտանիքի ամրության գրավականն այն անշփոթ արժեքների պահպանումն է, որ ավանդվել են մեր հայրերից: Ուղղակի հարցն այն է՝ որքան ենք վճռական այդ արժեքները պահելու հարցում: Ընտանեկան անհաջողություններն այդ վճռականության պակասի ուղիղ ցուցիչներն են: Հայ ընտանիքն այսօր պաշտպանված է այնքանով, որքանով հավատարիմ է իր ազգային ինքնությանն ու հավատին: Իսկ ընտանիքի հիմքերն առավել ամրացնելու և ոտքի վրա մնալու ամենապարզ եղանակը շարունակական ինքնակրթությունն է ու երեխաների ճիշտ դաստիարակությունը»:

Մենք տարիներ շարունակ առաջնորդվել ենք խրիմյանական «դրախտի ընտանիքի» կենսական գաղափարախոսությամբ և միաժամանակ այն հարստացրել մեր ընտանեկան կենսափորձով ու եկել այն եզրակացության, որ «դրախտի ընտանիքը» մեր մեծ օջախն է՝ ժպիտով ու թախծով, վերելքներով ու վայրէջքներով, բայց միշտ սիրով ու ջերմությամբ, հույսով ու հավատով, լավատեսությամբ և մեր կյանքով Աստծուն փառաբանող՝ լուռ և անլռելի:

Ձրույցի վերջում ուղղակի չեմ կարող չչեշտել՝ իմ մեծագույն մաղթանքն այս թեմայի շրջանակներում այն է, որ մեր հայրենիքում շատ լինեն այնպիսի արարող ընտանիքներ, որոնց հետ պատիվ են ունեցել ծանոթանալու, գրուցելու «Դրախտի ընտանիք» խորագրով այս շարքի շրջանակներում: Ահա Արտյոմը մեր գրույցն այսպես է եզրափակում. «Դժվար ժամանակներ ենք ապրում, նաև պայքարի, սիրո ու հաղթանակի ժամանակներ, եթե դժվարությունը դիտարկենք ոչ թե որպես արգելք, այլ՝ որպես հնարավորություն: Հնարավորություն՝ լավի ուղղված մեր ջանքերը բազմապատկելու, վատից լավի և լավից լավագույնին անընդհատ ընթացքով մեր ընտանիքներն ու երկիրը զորացնելու: 2025-ի զարման գարիքների հետ, կամոքն Աստծո, մեր ընտանիքն ավելի է զորանալու, քանզի մեր հարկից մերս մի նոր լույս է ծագելու, արևի մի նոր շող, մի Արև դուստր... »:

Արփի ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅ ՄԵԾԵՐԻՆ ԽՆԿԱՐԿԵՆՔ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ԱՂՈԹՔՈՎ

Էջ 7 ←

Յայտնենք անմիջապես, թե արդեն յարաբերության մեջ մտած ենք Տիգրանի Արուստից Թանգարանի Տնօրենության հետ եւ թանգարանին հաւանութիւնը ապահոված ենք Հայկական Ցուցահանդէսին համար: Ուրեմն, կը նկատենք, թէ պատահական սրահներու մէջ չէ որ կուզենք կազմակերպել Հայկական Ցուցա-հանդէսը, այլ վարկի տեսակետով՝ ամէնէն յարգուած կեդրոններէն մէկուն մէջ:

Հաւանաբար, Տիգրանի այս ցուցահանդէսը առիթը ստեղծէ, որ ուրիշ կարելու քաղաքներու մէջ վարկ եւ համբաւ վայելող թանգարաններ հետաքրքրուին ցուցահանդէսով եւ ուզեն կազմակերպել նաեւ իրենց քաղաքին մէջ: Ասիկա թանկագին պատեհութիւն մըն է ոչ միայն ամերիկահայութեան համար իր դարաւոր մշակոյթով հպարտանալու, այլ նաեւ նոյն ինքն Հայաստանի իր պատմական անցեալը ներկայացնելու ամերիկացի ժողովրդին: Հայաստանը Սովետական Միութեան հնագոյն երկրներէն մէկը ըլլալուն, վստահ ենք, Ձեր կառավարութիւնը եւս յարմար պիտի տեսնէ, որ յիշեալ ցուցահանդէսը արժանաւորապէս կազմակերպուի Տիգրանի մէջ:

Նկատի ունենալով որ այսպիսի ցուցահանդէսներու կազմակերպումը երկար ժամանակի կը կարօտի, կը խնդրենք որ Ձեր պատասխանը կարելի փութով հասցնէք մեզի: Սփոքեյնի ցուցահանդէսը պիտի տեսնեն մինչեւ այս տարուան նոյեմբեր ամիսը: Այդ ցուցահանդէսի փակումէն անմիջապէս վերջ կրնաք Հայկական բաժնի պատմական իրերը պատշաճ միջոցներով փոխադրել Տիգրանի:

Ցուցահանդէսի կազմակերպումը կը կարօտի հսկայ ծախսերու եւ այդպիսի ծանր յանձնառութեանց տակ տնկել առաջ պիտի փափաքինք ուշադրութեան եւ կոնկրետայ իր դրական արձագանքը:

Սպասելով Ձեր ազնիւ պատասխանին՝ կը մնանք,

Խորին յարգանք
Ա.Մանուկեան
Նախագահ

Հայաստանի ազգային արխիւ

Պատրաստեց Սիլվա ՍՈՒՔԻԱՅԱՆԸ